2021, ՍԵՊՏԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 18 (590)

Բիւզանդա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը ՀՀ անկախության տոնի առիթով

Սիրելի՛ ժողովուրդ ի Հայաստան, Արցախ եւ ի Սփյուռս,

Այս տարի լրանում է մեր անկախ պետականության վերահաստատման 30-ամյակը: Երեք տասնամյակ առաջ մեր ժողովուրդը միաբան կամքով, համախումբ եւ միասնական ընտրեց անկախության վերակերտման ճանապարհը՝ խանդավառությամբ եւ ոգեշնչումով իրագործելու իր դարավոր իղձն ու երազանքը: Պետականաշինության, հայրենակերտումի դժվարին ուղի անցավ մեր ժողովուրդը, դիմագրավեց բազում մարտահրավերների, հանձն առավ մեծ զոհողություններ: Պանծալի հաղթանակների, հաջողությունների ու ձեռքբերումների հետ ունեցանք նաեւ բացթողումներ, սխալ ընթացքներ ե՛ւ հայրենական անդաստանում, ե՛ւ միջազգային հարթակներում: Անցյալ տարի ազգովի ենթարկվեցինք նոր փորձության: Ադրբեջանը վերստին պատերազմ սանձազերծեց Արցախի Հանրապետության դեմ: Աղետալի պատերազմի ծանրագույն հետեւանքները եւ ամեն օր նորովի արնահոսող վերքերը բոլորովին նոր իրավիճակ են ստեղծել մեր ժողովրդի կյանքում: Մեր սրտերում մեր կորուստների, մեր նահատակների, գերյալների ու անհայտ կորածների խոր ցավն է, ապագայի անորոշության անհանգստությունը, բայց նաեւ՝ վճռականությունը վերստին ոտքի կանգնելու, թոթափելու մեզ պատուհասած արհավիրքներն ու նեղությունները եւ ապահովելու պայմաններ, որ մեր ժողովուրդն Արցախում ու Հայաստանում ապրի անվտանգ ու բարօր: Հայրենի երկրի անկախությունը մեծագույն արժեք է: Հայոց Եկեղեցին դարերի ընթացքում մշտապես արթուն է պահել անկախության գաղափարը մեր զավակների հոգիներում, օրհնել մեր ազատության մաքառումները, կարելին ի սպաս դրել մերօրյա անկախ հայրենիքի կայացմանն ու առաջընթացին եւ շարունակելու է իր առաքելությունն այս սուրբ գործում: Անկախության 30-ամյակի գլխավոր խորհուրդն առաջադեմ, բարօր, սիրո ու միաբանության մեջ ծաղկող երկիր վերակերտելն է: Այսօր, ցավոք, հաճախ ենք տեսնում անհանդուրժողականության դրսեւորում՝ համերաշխության ու երկխոսության փոխարեն: Մեր երկրի ու ժողովրդի առջեւ ծառացած հիմնախնդիրները պահանջում են միասնականություն, ջանքերի մեկտեղում եւ համախոհ նպատակադրումների իրականացում: Թանկ գնով ձեռք բերված անկախությունը համազգային միասնականությամբ պիտի պաշտպանենք ու պահպանենք՝ հաղթահարելով ներքին ու արտաքին մարտահրավերները այս սրբազան առաքելության ճանապարհին, քանզի մեր անկախ պետությունը մեր գոյության ու լինելիության կարեւորագույն խարիսխն ու գրավականն է: Անկախության տոնի առիթով հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում համայն մեր ժողովրդին եւ հորդորը՝ ամուր մնալու հավատքի մեջ, ընթանալու Աստծու պատգամներով, համախմբված հայրենիքի շուրջ, հայրենյաց սիրով ու եղբայրությամբ իրականացման առաջնորդելու ազգային մեր լուսավոր իղձերը: Աղոթք ենք վերառաքում առ երկնավոր Տերը, որ խաղաղություն շնորհի աշխարհին, մեր հայրենիքին, ստեղծագործ ու անվտանգ կյանք՝ ազգիս զավակներին, այսօր եւ միշտ. ամեն

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը սեպտեմբերի 27-ի օրվա առիթով

Սիրելի՛ հավատավոր ժողովուրդ,

Այսօր, ցավի մեր հոգում, մենք հիշում ենք 44-օրյա աղետաբեր պատերազմի տագնապալի օրերը, մեր բանակի քաջարի դիմադրությունը թշնամու դավադիր հարձակմանը: Հիշում ենք սխրանքները զինվոր ու սպա մեր զավակների, որոնք չընկրկեցին թուրք-ադրբեջանական գերակշռող ուժերի առջեւ:

Պատերազմը մեծ փորձություն էր, որի պատճառած ավերները եւ մեր ժողովրդի առջեւ ծառացած լուրջ մարտահրավերները չեն կարող վճռվել ներհասարակական լարվածության ու պառակտվածության պայմաններում: Վերելքի մեր ուղին յուրաքանչյուրիցս պահանջում է պատասխանատվության բարձր գիտակցություն եւ հայրենանվիրումի ոգի, համախմբում եւ միասնական ջանքեր՝ պաշտպանելու Արցախի մեր ժողովրդի ազատ ապրելու իրավունքը, Հայաստանի սահմանները, հաղթահարելու պատերազմով առավել սրված սոցիալական խնդիրները: Այս տեսլականով ջանքեր ներդնենք ազգի համախմբան, անհանդուրժողականության ու անհամերաշխության հաղթահարման համար: Քրիստոնեական մեր արժեքներին հավատարմությամբ զորանանք եւ զորացնենք մեր պետականությունը, ազգային-հասարակական մեր կյանքը՝ ամուր պահելով հույսի, հավատի, սիրո եւ արդարության ուղիներում: Մաղթում ենք, որ մեր ժողովրդին միշտ լսելի լինի հայրենիքը պաշտպանելու, միասնական լինելու պատգամը, որ թողնում են մեզ հանուն Արցախի անկախ կյանքի եւ հանուն մեր լուսավոր ապագայի նահատակված մեր քաջորդիները:

Ի խորոց սրտի աղոթում ենք հայրենյաց պաշտպան մեր զոհված հերոսների համար, հայցում մխիթարություն նրանց հարազատներին, ապաքինում մաղթում վիրավորներին եւ վերադարձ գերյալներին ու անհայտ կորածներին: Մեր հայցն է առ Աստված, որ Տիրոջ հանապազ օրհնությունը խաղաղության, ապահով ու անվտանգ կյանքի մեջ պահի մեր ժողովրդի զավակներին ի Հայաստան, Արցախ եւ ի Սփյուռս, այսօր եւ միշտ. ամեն:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բուենոս Այրեսի ՀԲԸՄ-ի վարժարանի սաներին

Սեպտեմբերի 26-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հյուրընկալեց Բուենոս Այրեսի (Արգենտինա) Հայկական բարեգործական ընդհանուր միության վարժարանի ավարտական լսարանի սաներին՝ ուղեկցությամբ ՀԲԸՄ-ի հոգաբարձուների խորհրդի անդամ Խուան Բալյանի:

Վեհափառ Հայրապետը, իր հայրական օրհնությունը բաշխելով պատանի հայորդիներին, ուրախությամբ արձանագրեց, որ տարիներ առաջ ձեւավորված վարժարանի ավարտական լսարանների՝ Հայաստան եւ Մայր Աթոռ այցելության ավանդույթն այժմ վերականգնվել է: Այս առիթով Նորին Սրբությունը պատգամեց շրջանավարտներին ջանասիրությամբ շարունակել իրենց ուսումը, որպեսզի ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները ծառայեցնեն արգենտինահայ համայնքի առավել աշխուժացմանը եւ հայրենիքի հզորացմանը:

Հանդիպմանը Հայոց Հովվապետը գոհանակությամբ արձանագրեց, որ արգենտինահայ գաղութն աչքի է ընկնում առանձնահատուկ կազմակերպվածությամբ, հայ կյանքի եւ ազգային արժեքների նախանձախնդիր պահպանմամբ, ինչի ականատեսն ու վկան է եղել Արգենտինա կատարած իր հովվապետական այցելությունների ժամանակ:

Վեհափառ Հայրապետը նաեւ պատասխանեց երիտասարդների հարցերին: Արգենտինահայ պատանիները մասնավորապես հետաքրքրվում էին, թե ինչպես է Նորին Սրբությունն ընտրել հոգեւորականի ուղին, եւ ներկայումս ինչպիսին է հովվապետական ծառայությունը:

Վերջում Նորին Սրբությունն ուխտավոր հայորդիներին մաղթեց Աստծու զորկացությունն ու պահպանությունը:

Այցելություն Եռաբլուր եւ Հանրապետական մաղթանք՝ Հայաստանի անկախության 30-ամյակի առիթով

Սեպտեմբերի 21-ի առավոտյան Հայաստանի Հանրապետության անկախության տոնի առիթով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պաշտոնավարող եպիսկոպոսների, Հայաստանի թեմական առաջնորդների եւ առաջնորդական փոխանորդների հետ այցելեց «Եռաբլուր» զինվորական պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու հայրենիքի անկախության եւ անսասանության համար իրենց կյանքն ընծայաբերած հայորդիների հիշատակին:

Պանթեոնում, Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, կատարվեց հոգեհանգստյան արարողություն: Հոգեւորականաց դասն աղոթք բարձրացրեց առ Աստված՝ քաջորդիների հոգիների խաղաղության համար:

Նորին Սրբությունն ու եկեղեցականներն առանձնաբար այցելեցին նաեւ ազգի հերոս զավակների շիրիմներին՝ բերելով իրենց խոնարհումն ու աղոթքը:

Եռաբլուրից հետո, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Սուրբ Գայանե վանքում կատարվեց Հանրապետական մաղթանքի արարողություն:

Հոգեւորականաց դասն ու ներկա ժողովուրդը միասնական աղոթք բարձրացրեցին առ Աստված՝ հայրենիքի անսասանության, խաղաղ եւ անվտանգ կյանքի համար:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների մասնակցությամբ կատարված մաղթանքի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական իր ուղերձը հղեց համայն հայ ժողովրդին:

Հոգեհանգիստ 44-օրյա դատերազմում զոհված քաջորդիների համար

Սեպտեմբերի 27-ին, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Սուրբ Գայանե վանքում կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ արցախյան 44-օրյա պատերազմում զոհված հայրենյաց պաշտպանների հոգիների խաղաղության համար:

Արարողությանը մասնակցում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ եւ աշխատակիցներ, բարերարներ, քաղաքական եւ հասարակական գործիչներ, «Էօռնեկեան» հանրակրթական դպրոցի մանկավարժներ եւ սաներ:

Մինչ հոգեհանգստյան արարողությունը խոսք ասաց Մայր Աթոռի լուսարարապետ Մուշեղ եպս Բաբայանը՝ անդրադառնալով 44-օրյա աղետալի պատերազմին: Սրբազանը հրավիրեց եկեղեցականաց դասին եւ ներկա հավատացյալ ժողովրդին աղոթք բարձրացնել նահատակված քաջորդիների հոգիների հանգստության, ինչպես նաեւ վիրավորում ստացածների ապաքինման եւ անհայտ կորածների վերադարձի համար:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Մայր Աթոռում տեղի ունեցած «Միջազգային կրոնական ազատություն եւ խաղաղություն» խորագրով համաժողովի ընդունած կոմյունիկեն

Միջազգային կրոնական ազատության եւ խաղաղության վերաբերյալ համաժողովը, որը գումարվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 2021 թվականի սեպտեմբերի 9—10-ը, հատուկ ուշադրություն է դարձրել կրոնի ազատության խթանմանը եւ հոգեւոր, մշակութային եւ պատմական ժառանգության պահպանմանը:

Հանդիպելով Սուրբ Էջմիածնում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովանավորությամբ եւ Արցախի / Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության ներկայացուցիչների ներկայությամբ, մենք՝ համաշխարհային քրիստոնեական համայնքի համաժողովի մասնակիցներս, խորապես հուզված եւ ոգեշնչված ենք հայ ժողովրդի պատմությամբ, որն առաջինն է ընդունել քրիստոնեական հավատքը որպես պետական կրոն, վերապրել է Օսմանյան կայսրության կողմից 20-րդ դարի սկզբին իրականացված ցեղասպանության ոճրագործությունը եւ Լեռնային Ղարաբաղի 2020 թվականի պատերազմի սարսափներն եւ պատմության այլ արհավիրքներ:

Հայ ժողովրդի շարունակական տոկունությունն ու հավատարմությունն իր հավատքին եւ մշակույթին արժանի են քրիստոնեական աշխարհի հիացմունքին:

Մենք վերահաստատում ենք կրոնի կամ համոզմունքների ազատության իրավունքի սկզբունքները, որոնք ամրագրված են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում եւ մարդու իրավունքների միջազգային եւ տարածաշրջանային հետագա պայմանագրերում: Մենք հավատում ենք, որ այս իրավունքը պատկանում է բոլորին՝ անկախ հավատքից կամ ազգությունից, պատմությունից կամ քաղաքական հանգամանքներից:

Այս իրավունքը պատկանում է նաեւ հայ ռազմագերիներին, որոնք դեռ անօրինական կերպով գտնվում են գերության մեջ, որոնց ազատ արձակման եւ հայրենադարձության համար մենք միջնորդում ենք եւ աղոթք առաքում:

Մենք միջնորդում եւ աղոթում ենք նաեւ Արցախի / Լեռնային Ղարաբաղի ժողովրդի համար, որի ազատ եւ խաղաղ բնակության իրավունքը մարդկային սրբազան կյանքի մասն է կազմում:

Մենք շեշտում ենք սուրբ եւ պաշտամունքի վայրերի, ինչպես նաեւ կրոնական ժառանգության պահպանության խիստ կարեւորությունը կրոնական ազատության արդյունավետ իրացման եւ ազգերի ու համայնքների միջեւ խաղաղ հարաբերությունների խթանման եւ պահպանման համար: Կրոնական ազատությունների իրականացման երաշխավորման համար էական նշանակություն ունեն պաշտամունքի վայրերի պաշտպանությունը եւ դրանց ազատ հասանելիությունը:

Ավելին, սուրբ եւ պաշտամունքի վայրերը, ինչպես նաեւ կրոնական ժառանգությունները մարդկանց եւ հավատքի համայնքների ամենախոր ինքնություններն են: Հենց այս պատճառով հակամարտության իրավիճակներում դրանք հաճախ դիտավորյալ թիրախավորվում են՝ որոշակի համայնքին առավելագույն կոլեկտիվ վնասվածքներ հասցնելու համար:

Ցանկացած հարձակում ցանկացած կրոնական համայնքի վրա, լինի դա այդ համայնքի անդամների կամ այդ համայնքի հետ առնչվող վայրերի վրա, հարձակում է ընդհանրապես կրոնական ազատության վրա, եւ, հետեւաբար, հարձակում բոլոր կրոնական համայնքների վրա: Եվ քանի որ կրոնական շինություններն ու վայրերը կրոնական ինքնության կրողներ են, պաշտամունքի վայրը վնասելը իրական բռնություն է հավատացյալների անձնական եւ հավաքական կրոնական ինքնության դեմ, որ վիրավորում է նրանց ինքնությունն ու հիշողությունները:

Մյուս կողմից հոգալով սուրբ եւ պաշտամունքի վայրերի ֆիզիկական ամբողջականության մասին՝ մենք պաշտպանում ենք այն մարդկանց արժանապատվությունը, ում համար հոգեհարազատ են այդ սրբավայրերը: Եվ երբ մենք համագործակցում ենք տարբեր ազգերի, կառավարությունների եւ հավատքի համայնքների հետ՝ պաշտպանելու կրոնական ժառանգությունը, մենք ազդարարում ենք բժշկման եւ միասնության բարեփոխման ուղերձը:

Հետեւաբար, մենք միանում ենք սուրբ վայրերի Համընդհանուր կանոնակարգի հաստատմանը եւ, մասնավորապես, հետեւյալ դրույթներին.

➥ էջ 3

Ի դատապանութիւն Արցախի հոգեւոր եւ դատմամշակութային ժառանգութեան

44-օրեայ պատերազմի աւարտից անմիջապէս յետոյ պարզ դարձաւ, որ ադրբեջանական կողմի վերահսկողութեան տակ մնացած տարածքների հայկական սրբավայրերը վերստին կարիք ունեն պաշտպանութեան:

Անսալով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի 2020 թ. նոյեմբերի 27-ի կոչին՝ ԱՄՆ-ի արեւմտեան թեմի առաջնորդ Յովնան արք. Տէրտէրեանի անմիջական նախաձեռնութեամբ 2020 թ. նոյեմբերի վերջերից արդէն նախաձեռնուեց եւ ստեղծուեց «Ի պաշտպանութիւն Արցախի հոգեւոր եւ պատմամշակութային ժառանգութեան» յանձնաժողովը՝ նպատակ ունենալով քայլեր ձեռնարկել հայկական աւելի քան 1700 յուշարձանի պահպանութեան ուղղութեամբ: Սրբազան հօր նախագահութեամբ յանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու հրաւիրուեցին անուանի հայագէտներ, իրաւաբաններ, հոգեւոր հայրեր, աշխատանքներին մաս կազմեցին նաեւ, արեւմտեան թեմի հետ մէկտեղ, ԱՄՆ-ի արեւելեան թեմը, Կենտրոնական Եւրոպիոյ եւ Սուէտի հայրապետական պատուիրակութիւնը, Մեծ Բրիտանիայի եւ Իռլանդիայի թեմերը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի՝ Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգութեան գրասենեակի հետ համագործակցութեամբ յանձնաժողովն ունեցաւ գրեթէ շաբաթական պարբերականութեամբ առցանց ժողովներ, որոնց տարբեր առիթներով մասնակցել է 40-ից աւելի անդամ՝ տարբեր թեմերից ու հաստատութիւններից: Կազմակերպական հարցերի կարգաւորումը, ժողովների ատենապետութիւնը, նաեւ, որ ոչ պակաս կարեւոր է, համաժողովների կազմակերպման տնտեսական ապահովութիւնը գլխաւորաբար յանձն առաւ Յովնան արք. Տէրտէրեանը: Ստեղծուեց եւ այժմ գործում է յատուկ համաժողովի համար ստեղծուած կայքը (https://www.irfpeace.org), ուր կարելի է գտնել նիւթեր համաժողովի ծրագրի, մասնակիցների եւ այլնի մասին:

Նախապատրաստական այս աշխատանքներից յետոյ սեպտեմբերի 8-ից մեկնարկեց «Միջազգային կրօնական ազատութիւն եւ խաղաղութիւն» քառօրեայ համաժողովը, որ Ս. Էջմիածնի յարկի տակ էր մէկտեղել բազմաթիւ անուանի գործիչների, քոյր Եկեղեցիների եւ քրիստոնեական կառոյցների ներկայացուցիչների, գիտնականների՝ ի մասնաւորի նպատակ ունենալով հանրահռչակել Արցախի հայկական ժառանգութեան պահպանութեան հարցերը եւ նպաստել դրանց պաշտպանութեան քայլերին: Համաժողովին անդրադարձել է «Շողակաթ» հեռուստաընկերութեան պատրաստած տեսանիւթը: Մենք յառաջիկային առաւել մանրամասն կ'անդրադառնանք այս հարցերին, յաւելենք միայն, որ արդէն իսկ ընթացքի մէջ է յաջորդ կոնֆերանսների կազմակերպումը, ինչպէս օրինակ՝ Զալցբուրգում, Արեւմտեան թեմում, որոնք տեղի կ'ունենան 2022 թուականին:

Յանձնախումբի անդամների ամբողջական ցանկը.

H.E Archbishop Hovnan Derderian
Primate of the Western Diocese of the Armenian Church of North America

Archbisop Vicken Aykazian
Ecumenical Director and Diocesan Legate of the Eastern Diocese of the Armenian Church of America

Bishop Hovakim Manukyan
Primate of the Diocese of the Armenian Church in the United Kingdom and Ireland

Very Rev. Fr. Pakrad Berjekian
Parish Priest of the St. John Garabed Armenian Apostolic Church of San Diego

Very Rev. Fr. Garegin Hambardzumyan
Head of Office for Artsakh Spiritual-Cultural Heritage Issues, RA
**Staff of the Office for Artsakh Spiritual-Cultural Heritage Issues*

Anush Khurshudyan
Coordinator of the Office for Artsakh Spiritual-Cultural Heritage Issues
**Staff of the Office for Artsakh Spiritual-Cultural Heritage Issues*

Robert Avetisian
Permanent Representative of the Nagorno Karabakh Republic to the United States

Dr. Mary Papazian
President of San José State University, USA

Dr. Christina Maranci
Professor at Tufts University, Art History Department, USA

Dr. Heghnar Zeitlian Watenpaugh
Professor of Art History, Department of Art and Art History, University of California, Davis, USA

Prof. Barlow Der Mugrdechian
Berberian Coordinator of the Armenian Studies Program California State University, Fresno

Dr. Sergio La Porta
Haig and Isabel Berberian Professor of Armenian Studies Interim Associate Dean of the College of Arts and Humanities California State University, Fresno

Dr. Rachel Goshgarian
Associate Professor, Department of History, Lafayette College, Easton, USA

Dr. Hratch Tchilingirian
Associate of Faculty of Oriental Studies University of Oxford

Dr. Hagop Panossian
Analysis Research & Planning for Armenia, President

Simon Maghakyan
Visiting Scholar at Tufts University and Lecturer in International Relations at the University of Colorado Denver, USA

Dr. Jasmine Dum-Tragut
Director of the Center for the Study of the Christian East at the University of Salzburg, Austria

Jora Manoucherian
Research on Armenian Architecture, President

Norayr Poghosyan
Doctor of Philological Sciences, Associate Professor of YSU

Armineh Pogosian
United Kingdom

Ms. Malvine Hakobyan
Coordinator-Secretary of the Office for Artsakh Spiritual-Cultural Heritage Issues
**Staff of the Office for Artsakh Spiritual-Cultural Heritage Issues*

Դիւան Առաջնորդարանի

Մայր Աթոռում տեղի ունեցած «Միջազգային կրոնական ազատություն եւ խաղաղություն» խորագրով համաժողովի ընդունած կոմյունիկեն

➥ էջ 2

• Սուրբ վայրերը պետք է պահպանվեն ներկա եւ գալիք սերունդների համար՝ արժանապատվությամբ, ամբողջականությամբ եւ հարգանքով իրենց անվան եւ դավանանքի ինքնության նկատմամբ: Դրանք պետք է պահպանվեն եւ որպես կրոնական նշանակության վայրեր, եւ որպես իրենց համայնքների եւ մարդկության պատմական, մշակութային եւ բնապահպանական ժառանգություն: Նրանք չպետք է պղծվեն կամ վնասվեն, ոչ էլ կրոնական համայնքները հարկադրաբար զրկվեն իրենց սուրբ վայրերից:

• ...բոլոր կողմերը պետք է նպաստեն սուրբ վայրերի պահպանմանը, ընդունեն ուրիշների սուրբ վայրերի նշանակությունը որպես պաշտամունքի վայրեր եւ ինքնության վայրեր, հարգեն այլոց կրոնական զգացմունքները այդ վայրերի նկատմամբ եւ շեշտեն դրանց հոգեւոր արժեքը, այլ ոչ թե որեւէ ռազմավարական, տարածքային կամ ռազմական նշանակությունը: Չի կարելի մերժել մարդկային խմբի կապվածությունը սուրբ վայրին:

Մենք նաեւ ընդունում եւ հաստատում ենք ՄԱԿ-ի Գործողությունների ծրագրի համապատասխան դրույթները կրոնական վայրերի պաշտպանության համար. ՄԱԿ-ի Գործողությունների ծրագիրը կրոնական առաջնորդների եւ դերակատարների համար՝ կանխելու բռնության հրահրումը, որը կարող է հանգեցնել վայրագ հանցագործությունների. Համաշխարհային ժառանգության կոնվենցիա եւ Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի շրջանակներում կրոնական ունեցվածքի պաշտպանության մասին հայտարարությունը:

Ինչ վերաբերում է 2020 թվականին հակամարտությունից հետո Արցախում / Լեռնային Ղարաբաղում տիրող իրավիճակին, որն իրականացվել է Ադրբեջանի կողմից եւ աջակցվում է նրա դաշնակիցների կողմից, մենք խորապես տագնապած ենք ներկայումս նրա վերահսկողության ներքո գտնվող տարածքներում հայկական կրոնական եւ մշակութային ժառանգության ոչնչացման, վնասի եւ պղծման բազմաթիվ հաղորդագրություններից:

Մեր մտահոգությունը սաստկանում է, երբ մենք հիմնավորված կերպով տեղեկանում ենք Զուղայում, Նախիջեւանում եւ Ադրբեջանի այլ վայրերում համաշխարհային ժառանգության նշանակություն ունեցող հայկական պատմական վայրերի համակարգված բնաջնջման մասին:

Այսպիսով՝ մենք.

–Կոչ ենք անում Ադրբեջանի կառավարությանը՝ անհապաղ եւ անարգել կերպով թույլատրել միջազգային փորձագետներին եւ դիտորդական առաքելություն իրականացնողներին մուտք գործել Արցախի / Լեռնային Ղարաբաղի այն տարածքները, որոնք վերջերս հայտնվել են Ադրբեջանի վերահսկողության տակ, ինչպես նաեւ Նախիջեւանի եւ Ադրբեջանի այլ վայրեր՝ անկախ գնահատում իրականացնելու համար:

–ՅՈՒՆԵՍԿՕ-ին կոչ ենք անում այս ոլորտներին գնահատման առաքելությունը դարձնել հրատապ գերակայություն:

–Խրախուսում ենք երկխոսության եւ համագործակցության նախաձեռնողական եւ կանոնավոր ներգրավումը, թե՛ խոսքի եւ թե՛ ներգործուն համերաշխության փորձերը, երբ թիրախում են կրոնական վայրերը եւ այլ կրոնների ու հավատքների հավատացյալները:

–Միջազգային հանրության բոլոր անդամներին համերաշխության եւ միջամտության կոչ ենք ուղղում՝ հայ ժողովրդին եւ համայնքներին երաշխավորելու այն նույն իրավունքները, որոնք միջազգային իրավունքի եւ բարոյական պատասխանատվության ուժով վերապահված են բոլորին՝ ներառյալ կյանքի իրավունքները, կրոնի կամ համոզմունքների ազատությունը, ինչպես նաեւ մշակութային արտահայտումն ու ինքնորոշումը:

–Մեր եւ համաշխարհային էկումենիկ ընկերակցության սերտ քրիստոնեական աջակցությունն ենք արտահայտում Հայ Եկեղեցուն: Մենք կանգնած ենք Հայ Եկեղեցու, նրա ժողովրդի, նրա սպասավորության եւ քրիստոնեական վկայության կողքին:

–Խոստանում ենք շարունակել համատեղ աշխատանքը Սուրբ Էջմիածնում միասին՝ այս օրերի ընթացքում բարձրացված խնդիրների եւ մտահոգությունների լուծմանն ուղղված գործողությունների ավելի մանրամասն ծրագրի մշակման եւ իրականացման ուղղությամբ:

2021 թվականի սեպտեմբերի 10
Կազմակերպիչ հանձնախումբ

ԱՅՐԻՎԱՆՔ (ԳԵՂԱՐԴԱՎԱՆՔ) ԵՒ ՍՈՒՐԲ ԳԵՂԱՐԴ

Սկիզբը՝ թիվ 16–17

Սուրբ գեղարդը Մայր Աթոռում մնում է մինչեւ 1805 թ., երբ իշխան Ցիցիանովն անհաջող փորձ է անում պարսիկներից գրավելու Երեւանը, բայց նահանջելիս նա հրամայում է Էջմիածնի վանքից Մայր Աթոռին պատկանող որոշ թանկագին իրեր, այդ թվում՝ սուրբ գեղարդը, տանել Վրաստան՝ պատճառաբանելով, թե իբր պարսիկները կգան եւ կթալանեն դրանք: Եվ այսպես գեղարդը, ընդամենը հինգ տարի մնալով Ս. Էջմիածնում, դարձյալ հայտնվում է Թիֆլիսում ու պահվում մինչեւ 1809 թվականը:

1809 թ. Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Եփրեմը կաթողիկոս է ընտրվում (Եփրեմ Ա Զորագեղցի, 1809–1830 թթ.) ու Թիֆլիսով Էջմիածին գնալիս հետ է վերցնում վանքի սրբությունները, այդ թվում՝ սուրբ գեղարդը: Այս անգամ արգելք չի լինում, որովհետեւ Վրաստանն արդեն գտնվում էր ռուսական տիրապետության տակ:

1811 թ. Թիֆլիսում նորից ժանտախտ է բռնկվում: Տեղի հայերի ու գեներալ Տորմասովի միջնորդությամբ սուրբ գեղարդը նորից տարվում է Թիֆլիս եւ պահվում մինչեւ համաճարակի ավարտը, ապա վերադարձվում Հայաստան: Բայց շատ չանցած՝ 1814 թ., Թիֆլիսում դարձյալ համաճարակ է տարածվում, եւ այս անգամ գեներալ Ռտիշչեւի խնդրանքով սուրբ գեղարդը կրկին Թիֆլիս են տանում, որտեղից վերադարձնում են միայն 1815 թ.՝ համաճարակի դադարից հետո:

Այնուհետեւ հիշատակվում է, որ Մայր Աթոռից սուրբ գեղարդը Երեւան են տարել՝ ամոքելու կարոտյալներին ու վատառողջներին, քանի որ տեղի բնակչության մեջ սոսկալի ջերմախտ էր տարածվել:

Երբ 1828 թ. սկսվում է ռուս-թուրքական պատերազմը, պաշարված Բայազետը գրավելուց հետո ժողովրդի մեջ սկսում է մոլեգնել ժանտախտը, ինչի պատճառով զորքին նույնիսկ ոչնչացում էր սպառնում: Գեներալ Ալ. Ճավճավաձեի հրամանով Մայր Աթոռից բերում են սուրբ գեղարդը, որը տանում են տնից տուն, փողոցից փողոց ու հիվանդանոցներ, եւ որտեղ երեւում էր սուրբ գեղարդը, Տիրոջ այդ սրբության հանդեպ հավատի շնորհիվ, մարդկանց ցավերը դադարում էին, ու համաճարակը կանգ էր առնում: Դեռ հազիվ Էջմիածին չվերադարձած, լուր է գալիս, որ Սուրմալուի գավառի գյուղերում՝ հատկապես Կողբի աղահանքերում, մարդկանց կյանքը հնձող համաճարակ է բռնկվել: Եվ սուրբ գեղարդը մի եպիսկոպոսի հետ այնտեղ տանելով ու պտտեցնելով համաճարակի օջախներում՝ Աստծո հրաշքով դադարում է համաճարակը, եւ մարդիկ ապաքինվում են: Այս մասին իմանալով՝ ռուսական բանակի Կովկասյան կորպուսի հրամանատար գեներալ Պասկեւիչը 1829 թ. փետրվարի 12-ին խիստ նամակ է գրում Եփրեմ կաթողիկոսին՝ պահանջելով այսուհետ արգելել եւ առանց իր գիտության սուրբ գեղարդը չտանել համաճարակի վայրերը, քանի որ, ըստ նրա, ամբոխի խմբվելու պատճառով այնտեղ խախտվում են ձեռնարկված բժշկական կարանտինային կանոնները: Այդ է լինում պատճառը, որ 1830 թ. ամռանը Թիֆլիսում բռնկված համաճարակի ժամանակ Հայոց կաթողիկոսը մերժում է սուրբ գեղարդն այնտեղ տանելու խնդրանքը, քանի որ գեներալ Պասկեւիչը դեմ էր դրան:

1846–1847 թթ.՝ Այսրկովկասում սկսված համաճարակի ժամանակ, ցարական իշխանությունները չարգելեցին սուրբ գեղարդը դուրս հանելը: Գեներալ Պյոտր Լադինսկին նամակ-խնդրանքով դիմեց Ներսես Ե Աշտարակեցի՝ «Պաշտպան հայրենյաց» կաթողիկոսին (1843–1857 թթ.), որ թույլ տան սուրբ գեղարդը տանել համաճարակով վարակված վայրերը, որտեղ նաեւ շատ մահմեդականներ կան, որոնք, տեսնելով քրիստոնեական սրբության միջոցով կատարվող հրաշքները, միգուցե կազդվեն ու իրենք էլ դարձի կգան եւ Քրիստոսին կհավատան: Հայոց հայրապետի թույլտվությամբ՝ սուրբ գեղարդը 1846 թ. տանում, պտտեցնում են Նախիջեւանի, Երեւանի գավառների գյուղերում, ապա 1847 թ. տանում Թիֆլիս ու համաճարակի դադարից հետո նորից Մայր Աթոռ վերադարձնում:

1920 թ.՝ Երեւանում բռնկված ժանտախտի ժամանակ, սուրբ գեղարդն Էջմիածնից դուրս չբերվեց, ու հազարավոր մարդիկ մահացան:

Այսքանից հետո, եթե դեռ կա հայորդի, որ չի տեսել սուրբ գեղարդը ու չի եղել գեղարդավանքում (եթե, իհարկե, հնարավորություն է ունեցել այցելելու), թող խորհի, թե ինչ թանկ բան է կորցրել:

Այժմ սուրբ գեղարդը պահվում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարանում: Գեղարդի արծաթե մասնատուփ-պահարանը 1687 թ. պատրաստել է տվել Դավիթ եպս Պռոշյանը: Հայոց կաթողիկոսները մյուռոնօրհնության ժամանակ Լուսավորչի աջի հետ սուրբ գեղարդով եւս օրհնում են սրբալույս մյուռոնը:

2015 թ. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական սրբատառ կոնդակով Հայոց Եկեղեցու հիմնադիրներ Ս. Թադեոս եւ Ս. Բարդուղիմեոս առաքյալների տոնը հռչակվել է Աստվածամուխ սուրբ գեղարդի ուխտի օր՝ ի գոհացումն բարեպաշտ հայորդյաց եւ օտարազգի ուխտավորների: Այդ օրը սուրբ գեղարդը բերվում է Մայր տաճար՝ հայոց առաջին լուսավորիչներ Ս. Թադեոս եւ Ս. Բարդուղիմեոս առաքյալների տոնի առիթով մատուցվող սուրբ եւ անմահ Պատարագին: Պատարագի ավարտին բարեպաշտ հավատացյալները հնարավորություն են ունենում համբուրելու, հպվելու այդ սրբազան մասունքին եւ ստանալու հրաշագործ սուրբ գեղարդից բաշխվող օրհնությունն ու շնորհները: Սուրբ գեղարդը Մայր տաճարում մնում է մինչեւ նույն օրվա ուշ երեկո:



* * *

Հինավուրց ժողովրդական մի ավանդություն հայտնում է, թե Գեղարդավանքը կառուցել են մի ազնվատոհմիկ ընտանիքից սերող քույր ու եղբայր: Երկար խորհելուց հետո նրանք փափագում են իրենց մահվանից հետո անմար հիշատակ եւ բարի անուն թողնել աշխարհում: Ու որոշում են թողնել աշխարհիկ կյանքը, առանձնանալ եւ մարդկանցից հեռու այդ ձորի մեջ մենաստան կառուցել: Երկար ժամանակ չկարողանալով որոշել կառուցվելիք մենաստանի վայրը, թե որտեղից պետք է սկսել գործը՝ եղբայրը դիմում է Աստծո օգնությանը. նա իր սրտաբուխ աղոթքներով խնդրում է Աստծուն օգնել իրեն: Այգաբացին արթնանալով՝ նա մոտակա լերկ ժայռի կատարին նշմարում է իր կռանը (մուրճ): Եղբայրը կռահում է, որ մենաստանի կառուցումը հենց այդ տեղից էլ պետք է սկսել: Եվ քույր ու եղբայր անմիջապես գործի են անցնում: Եղբայրը ջարդում է ապառաժ վեմը, իսկ քույրն էլ ջարդված քարերը, մազերի մեջ դնելով, բարձրացնում է ձորն ի վեր: Նրանց տքնաջան աշխատանքը երկար տարիներ է տեւում: Ի վերջո, քույր ու եղբայր ավարտում են իրենց ուխտած մենաստանի կառուցումը: Գեղատեսիլ ձորում, քանց ադամանդ, շողշողում է հրաշագեղ վանքը: Քույր ու եղբայր մինչեւ իրենց երկնանվեր կյանքի վերջը աստվածային սիրով ու հավատով ապրում եւ ծառայում են իրենց ձեռակերտ մենաստանում: Այդտեղ էլ կնքում են իրենց մահկանացուն՝ մեզ ավանդելով այս զրույցն ու հրաշագեղ Գեղարդավանքը:

* * *

Գեղարդավանքի հրաշագործությունների համբավը դուրս էր եկել Հայկական լեռնաշխարհի սահմաններից ու տարածվել հարեւան ու հեռավոր երկրներում: Ասում են, թե մոնղոլների առաջնորդ, արնածարավ Լենկ Թեմուր զորապետին լուր են տալիս, որ հրաշագործություններով հռչակված Գեղարդավանքում է պահվում Հայոց աշխարհի յոթ ձիաբեռ ադամանդը: Ագահ բռնակալը որոշում է անձամբ գլխավորել արշավանքը, տիրանալ այդ թանկարժեք գանձին ու փորձել սուրբ գեղարդի զորությունը: Անհաշիվ զորքով նա ասպատակում է Հայաստան, հասնում Գեղարդաձոր:

➥ *էջ 6*

Բանաստեղծական լեգեոն՝ հանուն հայ դարի

Թողեք, որ խոսեն բանաստեղծները…
Ս. Կապուտիկյան

20-րդ եւ 21-րդ դարերի սահմանագծին ժայթքեց հայ տաղանդաշատ բանաստեղծ Սամվել Մարգարյանի հրեղեն խոսքը, բանաստեղծի, որի երակներով հոսում էր պատմական հայրենիքի՝ անզուգական Մշո դաշտի բնիկ տերերի արյունը, որ այլեւս ոչ ոք եւ ոչինչ չէին կարող արգելակել կամ կանգնեցնել:

Նա պիտի խոսեր բանաստեղծական ոգեղեն լեզվով եւ խոսեր իր կորուսյալ հայրենիքի անունից՝ այդ նույն հայրենիքի անցյալից, ներկայից ու ապագայից:

Շուրջ երեսունհինգ գրքի հեղինակ է Սամվել Մարգարյանը: Վերջինը «Վան Արյան» հրատարակչության գեղեցիկ ձեւավորմամբ լույս է տեսել օրերս՝ «Մեծ Հայք» անչափ խորհրդանշական վերնագրով: Գիրքը նվիրված է Արցախյան այս պատերազմում զոհված քաջ հայորդիների հիշատակին: Ժողովածուն բացվում է «Այնտեղ՝ Արցախի կապույտ լեռներում» շարքով: Հուզախառով երգերի շարք է՝ հայ մարդու հոգին գոտեւորող ու ոգեշնող.

Աթափվիր, երկիր, եւ ոգեշնվիր,
Սերտիր դասերը նոր ժամանակների,
Որն էր սխալը, եւ ինչն էր թերի,
Սթափվիր, երկիր, եւ ոգեշնվիր:
Դու ճամփա ունես երկար ու երկար,
Նոր հեռաստաններ հաղթանակների,
Սթափվիր, երկիր, եւ ոգեշնվիր,
Սերտիր դասերը նոր ժամանակների:

Բանաստեղծի քնարն արձագանքում է մեր պատմության խորախորհուրդ խորքերին, մեկ առ մեկ վերհիշում փառքերը հայոց եւ հնչեցնում հուսո, լավատեսության ու զգաստության ղողանջներ.

Արցախ, տոկուն ես մարտնչում, հաղթում,
Գոյակռիվդ դեռ չի ավարտվել,
Դու շղթաներդ անդունդ ես նետել,
Արցախ, տոկուն ես մաքառում, հաղթում,
Մեր հին թշնամին ծուղակ է լարում,
Մեր նոր թշնամին պարզել է զենքեր,
Արցախ, տոկուն ես մաքառում, հաղթում,
Գոյակռիվդ դեռ չի ավարտվել:

Մեր ժողովրդի մղած 44-օրյա պատերազմը նրա բանաստեղծ որդու սրտում եւս թողել է խորին վշտի, ցավի ու թախծի հետագիծ, որն այնպես ալիքվում ու ելեւէջվում է նրա բոլոր տողերում.

Թախծում են հիմա նորեկ ձյունները
Այնտեղ՝ Արցախի կապույտ լեռներում,
Մատղաշ ծիլերն են ցավից արթնանում,
Թախծում են հիմա նորեկ ձյունները:

Սամվել Մարգարյան բանաստեղծը ոչ միայն սույն ժողովածուով, այլեւ իր համակ ստեղծագործությամբ արդեն իսկ դարձել է Հայ դատի ոգեղեն պաշտպանը եւ այդ դատը աշխարհի առջեւ պաշտպանում է շիտակ, ոգեշունչ բանաստեղծական խոսքով, ազնիվ ու առաքինի վարքագծով: Նա մեր ժողովրդին մղում է միասնականության ու համախմբման.

Սարդարապատում մենք խելքի եկանք,
Որ միասնությամբ են հաղթում թշնամուն,
Լեռնացած ազգը երբեք չի պարտվում,
Սարդարապատում մենք խելքի եկանք:
Սարդարապատում մեր ուժը տեսանք
Մեր ռազմի ոգու տարերքը անհուն,
Սարդարապատում մենք խելքի եկանք,
Որ միասնությամբ են հաղթում թշնամուն:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Վաթսունականների արձակագիրներ.
Ժամանակը եւ հերոսը

Սկիզբը՝ թիվ 12–17

Բնության, բնական ազատության եւ քաղաքակրթության որոշ կողմերի անխուսափելի բախումը Մաթեւոսյանի ստեղծագործության կարեւոր շերտերից մեկն է, որ նաեւ սկզբունքային դիրքորոշում է: Իսկ այդ սկզբունքներն իր մեջ կրող անհատը դառնում է հերոսների պատկերաշարի այն գլխավոր դեմքերից մեկը, որը նոր գաղափարական բովանդակություն է հաղորդում ժամանակակից հայ արձակին:

Մաթեւոսյանի ստեղծագործության երկրորդ հիմնական շերտը կյանքի տառապանքն է, այն դժվարին ու հոգեմաշ ընթացքը, որ կոչվում է դիմակայած կյանք: Ստեղծագործության այս կողմն առավել խորությամբ արտացոլված է «Բեռնաձիեր» շարքի գործերում եւ «Երկրի ջիղը» վիպակում: Քիչ ընդհանրացված ու վերացարկված հայացքով նայելիս գրեթե ոչ մի տարբերություն չի կարելի տեսնել Ալխոյի՝ չարքաշ ու տանջված բեռնաձիու եւ Աղունի՝ ծանր ու դժվարին կյանք ապրած կնոջ միջեւ: Ինչո՞ւ է այդպես. որովհետեւ կյանքը սրանց համար պարգեւ չի եղել, սրանք ծնվել են որպես կյանքի որբեր եւ իրենց գոյության ամբողջ ընթացքում որբի չարքաշությամբ մաքառել մի պատառ հողի եւ մի ծամածռված ու գունաթափ երջանկության համար: Կյանքի որբերի կողքին հեղինակն ստեղծում է նաեւ նրանց հակապատկերները. մի կողմից Ալխոն է, մյուս կողմից՝ փառահեղ ու հրեղեն Նարինջ զամբիկը, նարնջագույն հովատակը, որը կկծոտի ու կծվատի չարքաշ բեռնաձիուն, մի կողմից Աղունն է, մյուս կողմից՝ ձորում հսկայական մարմինը գետափի արեւին տված, իր յուղերի մեջ ճենճերացող վիթխարի կինը, մի կողմից «Սկիզբը» պատմվածքի՝ կյանքի դառնությունների միջից աշխարհին նայող պատանի հերոս Արայիկ Քառյանն է, մյուս կողմից՝ լկստված, կուշտ ու կուռ, երես առած, շոյված ու փայփայված մեկ ուրիշ պատանի հերոս՝ Լեռնիկ Արզումանյանը, որը կծեծի Արայիկին, իսկ Արայիկը չի կարողանա ձայն հանել, որովհետեւ փոքրուց շիլ Եղոշի տղա են ասել, ծաղրել են ու խեթել, արհամարհել ու խոսքերով, հայացքներով թունավորել նրա ու նրա նմանների կյանքը: Իսկ հետո հեղինակը կաշխատի ոխ ու քեն որոնել իր տանջված ու տառապած հերոսների մեջ («Ծառերը»), բայց չի գտնի, որովհետեւ կյանքի դառնությունները, չարքաշությունը, արհամարհանքը նրանց մեջ սպանել են ամեն մի ուժ, եւ նրանք ոչ թե բարությունից, այլ խեղճությունից կմնան անքեն ու անոխակալ, եւ նրանց մայրը դառնությամբ ու չիրականացված սպասումներով կասի. «Լավը չես, խեղճ ես, լավը չես, զավակս, որդիս, առաջնեկս, իմ հույսս, իմ թանկս, լավը չես, մեջդ վրեժ չկա» («Ծառերը»): Իսկ վրեժը պետք էր կյանքի արհամարհանքն սպանելու համար, ստորացումների դեմ կռվելու համար, սակայն այդ զգացողությունը մեռած է նրանց մեջ, եւ նրանց արյունը երբեք էլ «զրնգուն ու քինոտ» չի դառնա: Համակերպությունը նրանց արդեն իսկ դարձրել է խեղճ ու խոնարհ, ենթակա ու ստրուկ…

Հեղինակի համակրանքը կյանքի տառապանքը քաշած Աղունի, բեռնաձիու եւ վիրավորված ու անպատվված զգացմունքների տեր շիլ Եղոշի տղայի կողմն է, որովհետեւ նրանք են երկրի ջիղը, կյանքի արմատը: Եվ անգամ շքեղ տեսքով ներկայացնելով բնության փառահեղ կերտվածքին՝ նարնջագույն հովատակին՝ «հուրհրացող նարինջն այդ կանաչ աշխարհի մեծ արեգակի տակ վառվելով թռչում էր դեպի էն խեղճ բեռնաձին, ասես քամին հրդեհ էր փախցնում, եւ պղնձագույն պոչը հազիվ էր պոկվում, հազիվ էր հասցնում նրա ետեւից» («Օգոստոս»),– նա հետագայում, երբ կրկեսում տեսնում է ձիուն՝ շոյված ու վարժեցված, վերջնականապես ճշտում է իր վերաբերմունքը. «Եվ տեսնելով նրա ճարպոտ, ամեն օր քորվող, լվացվող, յուղվող գավակը, ես զգացի, որ նրան ատում եմ, եւ որ իմ մեջ կարծր է բեռնաձին՝ բոռերից քրքրվող, երեխաներից ծեծվող բեռնաձին, հովատակից արհամարհված, հովատակի սարսափը ջլերի մեջ եւ առջեւը ծղոտ»:



Տառապանքի եւ չարքաշ, դժվարին կյանքի լլկված պոեզիան՝ տխուր ու թախծոտ, բայց նաեւ իր գոյատեւման ճիգերի մեջ համառ մի կարծրություն է ստանում «Երկրի ջիղը» վիպակում: Շան կյանք քաշած մարդու դժվարին ճակատագրի նկարագրություն է ամբողջ վիպակը: Կյանք չտեսած, լավ օր չապրած կին է Աղունը: Ամբողջ կյանքում սպասել է մի լավ բանի, իսկ թե ինչի, ինքն էլ չգիտի: Կյանքն այնպես է կոտրում նրան, ծամծմում իր մամլակի մեջ, որ թվում է, թե ուր որ է նա կհոգնի մաքառելուց եւ կդադարի դիմադրել կյանքի հարվածներին: Երեք օրական է եղել Աղունը՝ մեռել է մայրը, դարպասեցի մերացուն նրան օր չի տվել, հայրը սնել է սոսկ դատարկ խոստումներով, հարս է եկել Ծմակուտ, բզկտվել տնեցիների կողմից, արհամարհված ու կիսաքաղց վիճակում օրեր է լուսացրել, նրան «առնաուտ» են կանչել ու ծեծել. «Սրանք աղի արտասուք են դարձրել մեր բոլորի ուրախությունները»: Բայց նա ապրել է, ապրել տան դռանը կապված՝ ծեծվող, բայց հավատարիմ շան նման, եւ ոչ միայն դիմացել է կյանքի հարվածներին, այլեւ տուն ու տեղ է դրել, երեխաներ մեծացրել, կռվել իր իրավունքների համար եւ հիմա, հյուծված ու մաշված, գնում է քաղաք, գնում է մեծ որդու տուն ու նրան բաժինք է տանում: Թվում է, թե հասել է երջանկության որպեն…

Դժվար ու ծանր կյանքի այս պատկերները Մաթեւոսյանի ստեղծագործության երկրորդ ու կարեւոր շերտն են, նրա հերոսներն այստեղ երեւում են անվերջ մաքառումների մեջ եւ կյանքի գնով նվաճում իրենց լինելու, ապրելու իրավունքները: Այս դժվարին նվաճումն է, որ ավելի արժեքավոր է դարձնում նրանց թեեւ չնչին, բայցեւայնպես առկա հաղթանակները, որոնք թեեւ կազմված են անվերջ պարտություններից, սակայն, ի վերջո, հաղթանակ են, որովհետեւ այդ պարտությունները չեն ոչնչացրել նրանց, այլ դարձրել են ավելի դիմացկուն ու համառ:

Մաթեւոսյանի ստեղծագործության երրորդ շերտը կապվում է«Խումհար» վիպակի հետ, մեկ օրվա անցուդարձ ընդգրկող դեպքերի մեջ, որոնք են՝ Միքելանջելո Անտոնիոնիի «Գիշերը» ֆիլմի դիտումը, քննարկումը, ժամանցն ասպիրանտ Եվա Օզերովայի հետ, հանրակացարանում Նադյայի հետ կապված պատմությունը, ծեծը, մանկության հիշողությունները, տնից ստացած ծանրոցը, խնձորի բույրը, իր նման մարդկանց հետ ունեցած շփումները եւ այս ամենն իրար շաղկապող, լրացնող այլ անցքեր,– նա ներկայացնում է հերոսի մի նկարագիր, որի ակունքները գտնվում են գյուղում եւ կապվում ծմակուտյան մթնոլորտի հետ, իսկ ինքը հիմա կյանքի նոր վիճակներ է ապրում աշխարհի խաչմերուկներից մեկում՝ Մոսկվայում, եւ ակունքների ու ներկա օրերի զուգակցումով ամբողջացնում իր զգացողությունների համակարգն ու գաղափարների շղթան:

➥ *էջ 7*

Կորոնավիրուս

Սկիզբը՝ թիվ 16

Կորոնավիրուսային համավարակի ընթացքում մարդկանց հոգեբանությունն էականորեն փոխվել է. համատարած փսիխոզից մինչեւ կյանքի արժեքների վերանայում, գնահատում: Ըստ նեյրոլինգվիստ Տ. Չերնիգորսկայայի՝ մինչ պանդեմիան աշխարհում տիրում էր մարդկային ամենակարողության զգացումը: Այս ընթացքում, այնուամենայնիվ, այդ զգացումը որոշակիորեն ի չիք դարձավ, եւ սկսվեց արժեքների վերագնահատում: Անցկացված հարցումները միանշանակորեն հաստատեցին ուսումնասիրության արդյունքները:

Ստորեւ ձեզ ենք ներկայացնում դրանցից մի քանիսը.

– Ես միանշանակ կողմ եմ դավադրության տեսության: Ըստ իս՝ սա նախապես գծագրված եւ պլանավորված է եղել մեզ համար անտեսանելի եւ անհասկանալի ուժերի կողմից: Միանշանակ դա անհերքելի փաստ է, որ պանդեմիան ռադիկալ փոխել է մեր կյանքը եւ այսօրվա իրականությունը: Ես համամիտ չեմ Լայթմանի կարծիքի հետ, թե համավարակը կբերի դրական փոփոխություններ: Միմիայն սեփական վախերը հաղթահարելով՝ մենք կկարողանանք վերապրել մարդկային այս պատիժը:

– Իմ կարծիքով՝ համավարակի շնորհիվ մենք սկսեցինք գնահատել մեր կյանքում կարեւոր բաներ, որ նախկինում չէինք գիտակցել: Ես միանշանակ համաձան եմ Տ. Չերնիգորսկայայի հետ, որ կորոնավիրուսն առաջնայինը երկրորդականից զատելու միջոց դարձավ:

– Իմ կարծիքով՝ համաշխարհային պանդեմիայի բերած այս վիրուսն ստեղծված է եղել լաբորատոր պայմաններում: Վստահ չեմ կարող ասել՝ դա դիտավորությո՞ւն է եղել, թե՞ մարդկային անփութություն, որ վիրուսը տարածվել է ամբողջ աշխարհով մեկ՝ բելելով համատարած լոքդաունի: Այդուհանդերձ, անհերքելի փաստ է, որ այս պատմության մեջ շահում են միայն դեղագործական ընկերությունները:

– Լսելով Միխայիլ Լայթմանի եւ Նատալյա Չերնիգովսկայայի կարծիքները կորոնավիրուսի մասին՝ կարծես թե մի պահ հայտնվում ես հակասությունների աշխարհում: Կարծիքները խիստ տարբեր են, բայց միեւնույն ժամանակ պարունակում են կարեւոր փաստեր այսօրվա իրականության մասին:

Ըստ Միխայիլ Լայթմանի՝ կորոնավիրուսային համավարակը ոչ այլ ինչ է, եթե ոչ հնարավոր գալիք պատերազմների «փրկօղակ»: Կորոնավիրուսի «հայտնվելը» մեր կյանքում ունի կարեւոր նշանակություն: «Շնորհիվ» կորոնավիրուսային մեկուսացման՝ մենք ունենում ենք հնարավորություն ավելի



արժեւորելու այն, ինչ ունենք՝ մասնավորապես մեր ընտանիքը: Մենք սկսում ենք ավելի լավ ճանաչել ու սիրել մեր հարազատներին, եւ սա թերեւս ամենակարեւոր կետն է «քովիդային իրականության»:

Մյուս կողմից՝ լսելով Տատյանա Չերնիգովսկայային՝ հասկանում ես, որ այսօրվա առանց այն էլ իրարից կտրված իրականությունն ավելի է աղավաղվում պանդեմիայի պատճառով: Մեկուսացում, շփման բացակայություն, օտարացում, հեռավար ուսուցում: Ըստ նրա կարծիքի՝ սա չարիք է հատկապես գալիք սերունդների համար:

Ես կարծում եմ՝ քովիդի համավարակը մեկ խնդիր լուծելու նպատակ ունի՝ ազատել մոլորակը գերծանրաբեռնվածությունից: Այն նաեւ ցուցիչն է փաստի, որ մարդը չափից շատ է խառնվում բնության «գործերին», եւ համապատասխանաբար՝ նրա նպատակն է՝ կրճատել բնակչության թիվը, օտարացնել անձանց, քչացնել կամ վերացնել միջանձնային շփումները, ինչը տարիներ հետո դեմոգրաֆիկ լուրջ խնդրի է հանգեցնելու, ազդել կրթության որակի վրա, հասարակությանը դարձնել ոչ գրագետ, ինչն էլ հղի է մի շարք վտանգներով:

Իսկ պատվաստումների մասին թույլ տվեք առայժմ լռել:

– Մենք քնեցինք մի աշխարհում, բայց արթնացանք բոլորովին այլ աշխարհում: Վանա լիճն ու Աղթամարի եկեղեցին այլեւս կանչող, անկրկնելի հրաշք չեն, Փարիզը՝ արվեստի կենտրոն, հրապուրող քաղաք, Եգիպտոսը, Հնդկաստանն ու Չինաստանն այլեւս հրավիրող, զարմանահրաշ երկրներ չեն:

Գրկախառնություններն ու համբույրները դարձան մարդ սպանելու, մարդ վերազինելու միջոց՝ «զենք»: Ծնողներին, բարեկամներին, ընկերներին չայցելելը դարձավ «սիրո եւ հոգատարության» արտահայտություն:

Մարդն սկսեց հասկանալ, որ իշխանություն, փառք, հարստություն, կալվածքներ ունենալը ոչինչ չարժե, չի կարող տալ թոքերիդ այդքան անհրաժեշտ թթվածին, փրկել քեզ մահվան ճիրաններից;

Իսկ այդ ընթացքում բնությունը շարունակում է ապրել: Ավելին՝ փթթել, ավելի ծաղկել, գեղեցկանալ, ուրախանալ:

Եվ, թվում է, թե ասում է. «Մարդ արարած, քո ներկայությունը ոչ միայն ցանկալի, փնտրելի չէ, ավելին՝ անհրաժեշտություն չէ»: Հողը, օդը ջուրը, երկինքը լա՛վ էլ կան առանց մարդու, ապրում են: Նրանք կարծես ասում են. «Եվ երբ դուրս գաս այդ կալանքից, քո իսկ ստեղծած վանդակից, հիշի՛ր, որ դու իմ հյուրն ես եւ ոչ տերն ու տիրակալը»:

Խաղաղ օվկիանոսում քո կուտակած աղբից ԱՄՆ-ի տարածքին հավասար կղզի է գոյացել: Հազարամյակներ են պետք, որ այն վերանա կամ վերամշակվի: Իսկ արդյո՞ք հազար տարի հետո այսօրվա մարդկությունը գոյություն կունենա… Շատերն են տարակուսում, որովհետեւ մարդ արարածը երկրագունդը մեծ արագությամբ գլորում է դեպի անդունդ, զրկում է նրան կյանքի իրավունքից, այսպիսով՝ երկիրը դարձնելով անկենդան մի մոլորակ: Եվ ո՞ւր պիտի փախչի մարդկությունը. տառացիորեն ոչ մի տեղ:

Անիմաստ է երազել Մարսի եւ որեւէ այլ մոլորակի մասին: Ի՞նչ է, այնտեղ նույն այլանդակությունները չպիտի՞ անի մարդը…

Քանի դեռ մարդկությունն իրեն չի վերանայել, չի ուղղել, շտկել իր բնությունը, էությունը, չի հրաժարվել իր եսակենտրոնությունից ու եսասիրությունից, չի դարձել ալտրուիստ, ոչինչ չի փոխվի: Միայն այդ դեպքում մարդկությունը ապագա կունենա:

Իսկապես, եթե չփոխվենք, կամաց-կամաց մենք մեզ կթաղենք մեր իսկ ստեղծած աղբանոցի մեջ:

Պոտերը սրանից 60 տարի առաջ ասում էր՝ գիտությունը, տեխնիկան, տեխնոլոգիաները զարգանում են աննախադեպ տեմպերով: Եվ եթե խիղճը, բարոյականությունը դրանց զուգահեռ, համընթաց չգնան, ապա մարդկությունը, անդունդից բացի, այլ տեղ չունի գնալու: Նա սեփական ձեռքերով կփորի այն փոսը, անդունդը, որի մեջ ինքն իրեն կգլորի, կթաղի: ➥ *էջ 8*

ԱՅՐԻՎԱՆՔ (ԳԵՂԱՐԴԱՎԱՆՔ) ԵՒ ՍՈՒՐԲ ԳԵՂԱՐԴ

➥ էջ 4

Լենկ Թեմուրին ուղեկցում են հանճարամիտ ճարտարապետ Գալձագի՝ միակտոր ժայռի մեջ փորած եկեղեցին, որտեղ, իբրեւ թե, պահվում էր Հայոց աշխարհի յոթ ձիաբեռ ադամանդը:

– Հանճարածին կոթող է, ժայռեղեն գոհար,– զեկուցեցին սարսափազդու զորապետին:

– Բայց մեր ինչի՞ն է պետք սա: Ոչ ավերել կարող ենք, ոչ էլ շալակել ու տանել:

– Ասում են, թե հենց այս ժայռակերտ վանքում է պահվում Հայոց աշխարհի յոթ ձիաբեռ ադամանդը:

Լսելով դա՝ մոնղոլ զորապետի բիբերը լայնացան, դեմքով գոհունակություն արտահայտող մի ժպիտ սահեց: Լենկ Թեմուրը որոշեց անձամբ հափշտակել այդ մեծ, անգին հարստությունը: Նա ծանր քայլերով մոտեցավ ժայռակոփ եկեղեցուն եւ քննախույզ հայացքով տնտղեց ներսը: Եկեղեցու խորհրդավոր մթության մեջ առկայծում, հուրհրատում էր մի լուսափունջ: Հիրավի, այդպես պայծառ կարող էր փայլատակել միայն ադամանդը: Ընչաքաղց զորապետը՝ Լենկ Թեմուրը, հազիվ զսպելով ուրախությունը, նետվեց ներս եւ ձեռքերը տարածեց դեպի շողարձակող լուսափունջը: Բայց այ քեզ հրաշք, ադամանդի հուրհրատող լուսափունջն իսկույն անհետացավ: Լենկ Թեմուրը դանդաղորեն շրջվեց եւ ձեռնունայն վերադարձավ եկեղեցու մուտքի մոտ: Ադամանդը կրկին ցոլցլաց: Զորապետը եւս մի քանի անգամ փորձեց ճանկել ադամանդը, բայց՝ ապարդյուն: Ամեն անգամ, երբ Լենկ Թեմուրը ձեռքերը պարզում էր դեպի ադամանդը, շողշողացող լուսափունջն անմիջապես մարում էր:

Ասում են, թե դա ընդամենը մի սովորական լուսափունջ է եղել: Շնորհաշատ վարպետ Գալձագն այնպիսի շարժական քար է տեղադրած եղել, որը ժամանակ առ ժամանակ պտտելով՝ հնարավոր է եղել միջօրեի արեւի լույսն ուղղել դեպի ներս: Ահա եկեղեցի ներթափանցած հենց այդ լուսափունջն է ադամանդի պես պսպղացել է: Հետագայում, սակայն, երկրաշարժերի հետեւանքով ապարները քարը տեղաշարժել են, եւ այն կորցրել է իր առանձնահատկությունը:

Այնուհետեւ, հուսախաբ եղած ու դատարկաձեռն մնալուց կատաղած, գոռոզ տիրակալը հոխորտանքով ու ծաղրանքով հրամայում իր մոտ բերել սուրբ գեղարդը: Զառամյալ վանահայրը հարկադրված բերում է սուրբ գեղարդը, խոնարհաբար համբուրում այն եւ համրաքայլ մոտենում բռնապետին: Երբ զինվորները բարձրացնում են նիզակները, որպեսզի հարվածեն սուրբ գեղարդին, անմիջապես հայտնվում են զրահավորված եւ երփներանգ համազգեստներով բյուրավոր անմարմին, ոգեղեն զինվորներ ու ամեն կողմից հարձակվում թշնամու վրա: Մեծ խուճապ ու իրարանցում է ընկնում Լենկ Թեմուրի զորքի մեջ. ովքեր փորձել էին նիզակով հարվածել սուրբ գեղարդին, նրանց ձեռքերը կծկվում, չորանում են, կախ ընկնում ուսերից, շատերը կուրանում են, ոմանք անշնչացած արձանանում, մյուսները ոռնոցով թավալվում գետնին կամ սարսափահար փախուստի դիմում: Այս տեսարանից ապշահար՝ տերեւի պես դողացող Լենկ Թեմուրն աչքերը երկինք է հառնում եւ ողբաձայն գոչում. «Աղամ, գյոր, գեչ» («Տեր իմ, տես, անցիր»): Այսինքն՝ հրաշագործ սուրբ գեղարդն ու հանճարակերտ Գեղարդավանքը պետք է տեսնել, զմայլվել ու անցնել, հեռանալ: Իսկ ով կփորձի ծաղրել ու վնասել, կարժանանա իր՝ Լենկ Թեմուրի բախտին ու կպատուհասվի արդարորեն: Ապա խեղճացած բռնակալը սուրբ գեղարդից թողություն է խնդրում, ամբողջությամբ վերադարձնում թալանած գանձերն ու ձեռագրերը, ազատ արձակում գերիներին, այլեւայլ պարգեւներ խոստանալով՝ սրարշավ հեռանում Գեղարդավանքից:

Այդ ժամանակներից էլ Այրիվանք-Գեղարդավանքն օտարներն անվանեցին «Գյորգեչ» («Տես ու անցիր»): Դարեր եկան ու անցան: Դարերի հետ էլ շատ ու շատ նվաճողներ ու ավարառուներ եկան Գեղարդաձոր, տեսան ու անցան, իսկ հանճարարվեստ կառույցը մնաց հավերժող՝ դառնալով Հայաստանի նշանավոր ուխտավայրերից ու տեսարժան վայրերից մեկը: Հավերժեց նաեւ իմաստուն եւ ուսանելի այս զրույցը, ու դաժան բռնապետ Լենկ Թեմուրի խրատական հորդորը.

– Մարդ պետք է միայն տեսնի ու անցնի եւ հայոց փայլատակող ադամանդը, եւ ադամանդափայլ այս վիմափոր վանքը... Ոչ ավերել կարող ենք, ոչ էլ շալակել ու տանել...

Եվ հիմա շատ քչերը գիտեն, թե ինչու է հայկական ճարտարապետության անկրկնելի այս գոհարը մի ժամանակ կոչվել «Տես ու անցիր»:

Գեղարդի առյուծը (կոթող-ուղենշան)

Վաստակաշատ ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի նախագծով կառուցված «Գեղարդի առյուծը» կամ «Գեղարդի հովազը» կոթող-ուղենշան է Գեղարդավանքի ճանապարհին: «Գեղարդի առյուծը» միայնակ կանգնած է ժայռին եւ վերեւից իշխում է ամբողջ բաց տարածության վրա: Կոթողը հիշեցնում է Գեղարդավանքը կառուցող Պռոշյան տոհմի զինանշանի զույգ առյուծներին (կամ հովազներին) եւ աչքի է ընկնում նրբագեղ գծերի պլաստիկայով: Արտիստիկ անկաշկանդությունն ու վեհատեսիլ գեղեցկությունը միաձուլված են ստեղծագործական երեւակայության ու մտքի ազատության հետ: «Գեղարդի առյուծը» Հայաստանում առաջին դեկորատիվ քանդակներից մեկն է եւ ընդգրկված է Գեղարդ գյուղի պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում: «Գեղարդի առյուծ» դեկորատիվ քանդակը տեղադրվել է 1958 թ.՝ Գեղարդավանք տանող ճանապարհի աջ կողմում: Բազալտե պատվանդանի վրա տեղադրված քանդակը (քանդակագործ՝ Արա Հարությունյան) պատրաստված է կոփածո պղնձից:

Գեւորգ Էմին

Գեղարդի վանքը

Նուրբ կոթող չես գտնի այս հողում.
Դարերին նուրբը չէր դիմանա:
Չլիներ Գեղարդը ժայռերում՝
Կավերվեր ու փոշի կդառնար:
Եղածն էլ դրսից չի շողշողում.
Կտեսներ ոսոխը աններող:
Ծածկված է Գեղարդը ժայռերում
Եվ ներսից միայն՝ նուրբ ու գերող:
Մեծ կոթող չեն կցել այս քարին.
Պատերազմ է եղել անդադար: –
Մեծ լիներ Գեղարդն ու վիթխարի՝
Կմնար հավիտյան անկատար:
Կոթողներն իրար չեն նմանվում.
Ինչքան հայ, այնքան էլ Հայաստան՝
Եղեռնով ցրված ողջ աշխարհում,
Հայրենի կարոտով միաբան:

Արման ՄԱԼՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Եղիշե Չարենցի «Ծիածան» բանաստեղծական շարքի տաղաչափական արվեստը

Եղիշե Չարենցը հայ գրականության առաջին մեծության դերակատարներից մեկն է, սակայն շատերի ծանոթությունը Չարենցի հետ սահմանափակվում է նրա ստեղծագործությունների զուտ ընթերցանությամբ, եւ քչերն են ներթափանցում բանաստեղծի հոգու գաղտնարանները: Հարկ է նշել, որ Չարենցը ոչ միայն գրել է հանճարեղ բանաստեղծություններ, այլեւ ընդարձակել է գեղարվեստական մտածողության հայեցադաշտը, կանխորոշել գրականության հետագա զարգացման ուղիները, թարմացրել լեզուն եւ տաղաչափությունը, ինչպես նաեւ հարստացրել է գրական ժանրերը: Սակայն շեշտել Չարենցի միայն այս բարձր արժանիքները, նշանակում է քիչ բան ասել նրա մասին, քանի որ այդ ամենով չի ամբողջանում բանաստեղծի դիմապատկերը: Բազմաթիվ հեղինակներ ու գրականագետներ այս կամ այն ձեւով անդրադարձել են Չարենցի անձին ու նրա ստեղծագործությանը: Օրինակ՝ անվանի գրականագետ Դավիթ Գասպարյանը Չարենցին բնութագրեց որպես «մարտիկի», «քաղաքացի բանաստեղծի», տաղաչափական արվեստի ձեւարարի, ուժի եւ արագ շարժման բանաստեղծի (*տես Գասպարյան Դ., Հայոց բանաստեղծության մայրաքաղաքը, Եր., 1996, էջ 642*):

Այս ուսումնասիրության ընթացքում նպատակ ունենք անդրադառնալու Չարենցի տաղաչափական արվեստին եւ ներկայացնելու նրա «Ծիածան» բանաստեղծական շարքի տաղաչափությունը:

Նախեւառաջ պետք է նշել, որ Չարենցի պոեզիայի տաղաչափության ուսումնասիրությունը ցույց է տալիս հիմնական ձեւերի ու զուգորդումների մեծ բազմազանություն: Խոսելով Չարենցի մասին՝ Ավետիք Իսահակյանը նշում է. «Պետք է ասեմ, որ Չարենցը Հոկտեմբերյան սոցիալիստական էպոխայի ամենամեծ բանաստեղծն է հայ գրականության մեջ, եւ նա բազմակողմանի կերպով ազդեց հայ գրականության վրա, մանավանդ ռիթմի, լեզվի, տաղաչափության, պոետիկայի կողմից» (*տես Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու, հ. 5, Եր., 1977, էջ 125*): Սա վկայում է այն մասին, որ Չարենցը բոլոր դեպքերում ցուցաբերել է տաղաչափական բազմակողմանի հնարավորություններ՝ պահպանելով ոչ միայն դասական ավանդները, այլեւ զարգացնելով տաղաչափական ձեւերն ու հյուսվածքները: Առհասարակ պետք է ասել, որ Չարենցը ձգտում էր տաղաչափական ու ռիթմական հարստության լիակատար զարգացման: Տաղաչափական բազմազանությունն ակնհայտ է պոետի գրական գործունեության բոլոր էտապներում: Պ. Սեւակը գրել է. «1500 տարվա ճանապարհ անցած մեր տաղաչափության մեջ նորություն բերելը համարյա անհնարին մի գործ էր, իսկ Չարենցի բերած նորությունները շատ էին այնքան, որ ստիպեցին Մ. Աբեղյանի նման մեկին հատուկ ուսումնասիրություն գրել այդ մասին...» (*Սեւակ Պ., Երկերի ժողովածու, Եր., 1974, հ. 5, էջ 328*): Մ. Աբեղյանն իր հերթին նշում է, որ Չարենցին բավականություն չեն տալիս մեր բազմաթիվ ու բազմազան տաղաչափական ձեւերը, եւ նա միշտ ձգտում է նորության, նոր ձեւեր առաջ բերելուն (*տես «Նորք», հանդես, Եր., 1923,* №*3, էջ 272*): Այսինքն՝ բոլոր գծերով Չարենցի ստեղծագործությունը միտում էր մշտապես դեպի նոր ու բարձր աստիճանի: Սակայն Չարենցը միաժամանակ, օրինակ, կասկածամտությամբ է վերաբերվել վանկաշեշտային համակարգի գոյությանը մեզանում: Ահա ինչ է նա նկատում. «...մեր տաղաչափությունն իր հիմքում, այնուամենայնիվ, *վանկային* է, իսկ շեշտային տաղաչափությունը մեր բանաստեղծական արվեստի մեջ *բերովի, արհեստական* կուլտուրա է, որ իր հիմքում իսկ *ինտելիգենտական է*, այսինքն՝ մտացածին: Ոչ միայն սովորական հայ ընթերցողը, այլեւ նախատերյանական ֆորմացիայի հայ ինտելիգենտը բանաստեղծությունը կարդում է իմաստի, ինտոնացիայի շեշտերով, եւ երբեք տոնիքական տաղաչափությամբ» (*Չարենց Եղ., Երկերի ժող., հ. 6, Եր., 1967, էջ 478*):

Վանկային ոտանավորի ձեւով են գրված նաեւ «Ծիածան» ժողովածուի բանաստեղծությունները: «Ծիածան»-ը Չարենցի վաղ շրջանի բանաստեղծական շարքերից է, որը լույս է տեսել 1917 թվականին եւ ունի «Իրիկնային քրոջս՝ Կարինե Քոթանճյանին» նվիրումը: Բովանդակությամբ եւ կառուցվածքով այն ամբողջական քնարական պոեմ է, որը վերարտադրում է Աստվածամոր աչքերով աղջկա եւ բանաստեղծի ֆանտաստիկ սիրո պատմությունը: Սիմվոլիստական ծիածանի բանաստեղծություններն ունեն գունային որոշակի երանգավորում, եւ շարքի համապատասխան մասերն են՝ «Կապույտ»-ը, «Ոսկի»-ն, «Մանուշակագույն»-ը:

«Ծիածան» բանաստեղծական շարքի տաղաչափության ուսումնասիրությունից պարզվում է, որ հեղինակը հիմականում գործածել է 10-վանկանի ոտանավորի չափը, սակայն հանդիպում են նաեւ 11, 13, 14 եւ 15-վանկանի ոտանավորներ:

➥ էջ 7–8

Վաթսունականների արձակագիրներ.
Ժամանակը եւ հերոսը

➥ *էջ 5*

Գյուղում հերոսի կյանքի արմատներն են, նա կյանքի կենսահյութեր է ներծծում այդ միջավայրից, բայց ճյուղերը ուրիշ քամիների առաջ են տարուբերվում: Արմատի ու ճյուղերի հակադրություն թեեւ կա, ենթադրվում է, բայց դա, հակադրություն լինելով, նաեւ միասնական ամբողջություն է՝ ճյուղերն արմատների շարունակությունն են: Ծմակուտյան կյանքն ուրիշ վիճակների մեջ է պահում մարդկանց, իսկ նոր կյանքն ստեղծում է միանգամայն այլ վիճակներ, որոնք եւ դրդում են հերոսին իր մեջ հայտնաբերելու նոր գաղափարներ ու զգայական շարժումներ: Բեռնածիների ու դժվարին կյանքի պատկերները փոխարինվում են մտքի աշխատանքի բանական հոսքով, եւ նրա հերոսը՝ Գեւորգ Մնացականյանը, ներկայանում է ժամանակակից կենսագրության միանգամայն նոր նկարագրով:

Իր հերոսի մեկ օրվա լի, հագեցած կյանքի պատկերումով, որն ընդգրկում է գործողությունների, հանդիպումների, զրույցների, տարբեր վիճակների, հին ու նոր կապերի զուգադրման, անցյալի նպատակային վերհուշերի, մտքի ներքին ճյուղավորման, ասվող ու չասվող խոսքի, զուգահեռ խոհերի, զանազան նրբերանգների դիտումների մի ոչ միագիծ ընթացք, Մաթեւոսյանն ստեղծում է ապրած օրվա իմաստը եւ գոյության հիմքերը որոնող բանական հերոսի կերպար: Հեղինակը, իր խոսքերով ասած, միայն դեպքեր շարադրող չէ: Այդ ամենի հիմքում կան աշխարհայացքային կարեւոր սկզբունքներ, որոնք հանգում են կյանքի հոսանուտ ու խառնիխուռն ընթացքի մեջ անհատի գոյափիլիսոփայական ինքնագիտակցմանը: Այդ ինքնագիտակցումը հասունանում ու ենթագիտակցորեն ձեւավորվում է օրվա անցուդարձի մեջ, գյուղական հիշողությունների մեջ, ստեղծագործության բեմարքի սկզբունքների պաշտպանության մեջ, սիրային-սեռական գրգիռների մեջ, զգացողությունների, մտքերի, ապրումների խորքում եւ կանգնում



կյանքի արտաքուստ պարզ թվացող, բայց ներքուստ բարդ, բազմաշերտ, տարբեր ուղղություններով ընթացող, նաեւ խառնիփնթոր ու անհամասեռ պատկերների առաջ: Կյանքի գտած ուղիների, ճանաչած փակուղիների համատեղումը հերոսի էության մեջ աստիճանաբար, բայց ոչ բացահայտ, արթնացնում է հեռվում թողած հայրենի եզերքի կարոտը: Ու որպես կանչող ձայն, որպես ձգող ում՝ կյանքի այդ խառը խաչուղիների առջեւ աճում, բարձրանում են հայրենի բնաշխարհի ու դրա գրկում ծվարած գետաքարերից շինված տան պատկերները, որոնք խնձորի բույրով, հիշողություններով, կարոտներով նրան տանում հասցնում են իր ծագման պարզ ու զուլալ ակունքներին:

Ինքնաճանաչողությունը վիպակում ընթանում է նաեւ ստեղծագործական-ծրագրային հարցերի արծարծմամբ: Վիպակի հերոսն սկսում է խորհել կյանքի եւ արվեստի կապի մասին, տեսական եզրակացություններ անել այդ ամենից եւ մի տեսակ ծրագրավորել իր ըմբռնումներն ու դրույթները: Ահա այդ հերոսի եւ Եվա Օզերովայի խոսակցությունից մի հատված. «Անտոնիոնին քեզ դո՞ւր եկավ»,– հարցրեց, «Այո»,– ասացի ես, «Նա բացահայտում է կյանքը շարժող նախնական բնազդները»,– ճշգրիտ ու սառը արձանագրեց նա»: Այս ձեւակերպումը խորհրդանշում է նաեւ Մաթեւոսյանի արվեստը, որովհետեւ նա եւս, մանրազնին դիտումներով, հետամուտ է կյանքը շարժող նախնական բնազդների իմացությամբ ու բացահայտումով նկարագրելու իր հերոսների վարքագիծը, պահվածքը, հոգեբանական վիճակները: Այս կողմնորոշումն ընկած է նաեւ վիպակի հիմքում:

Այնուհետեւ նրանք խոսում են արվեստի հարցերի մասին եւ փորձում իրենց դատողություններով հայտնաբերել կյանքն ընկալելու նոր տարբերակներ: Խոսակցության մեջ հասունանում է կյանքի ու արվեստի հարաբերության նոր սկզբունքների ճշտման կարեւորությունը: Վիպակում արծարծված տեսական մտքերը կարեւորություն են ստանում՝ առավել չափով կապված Մաթեւոսյանի արձակի հետ եւ մղում հետեւյալ խորհրդածության. Մաթեւոսյանը վերցնում է կյանքի նյութը եւ իր անհատական դիտողականությամբ, ընկալումներով ու տվյալ նյութի պարտադրած «իզմով» լուծում նյութի առաջադրանքը: Կյանքը կյանք է մնում նրա արվեստում, բայց դա արդեն նրա՛ տեսած, նրա՛ հայտնաբերած կյանքն է: Գեւորգ Մնացականյանի եւ Եվա Օզերովայի խոհերը շարունակվում են եւ, ի վերջո, հանգում Մաթեւոսյանի արձակի համար կարեւոր մի դատողության. «Լսիր, դա քեզ է վերաբերում,– դիմում է Եվա Օզերովան Գեւորգ Մնացականյանին,– գյուղն այն խաչմերուկը չէ, որտեղ խճճված լինեին քսաներորդ դարի նորագույն գծերը: Գյուղի նյութով անհնար է քսաներորդ դարի գրականություն անել...»: Արձակի հարցերին նվիրված բանավեճը կարծես շարունակվում է. հարցի տեսական դրվածքը մղվում է գեղարվեստական լուծման: Եվայի հարցի պատասխանը, թվում է, պետք է որոնել ամբողջ վիպակի գեղարվեստական-գեղագիտական-աշխարհայացքային ուղղվածության մեջ: Իսկ այդ ուղղվածությունը հեղինակային կողմնորոշման ու նախասիրությունների արտահայտությունն է, ինչը վիճելի կամ ընդունելի, ճիշտ կամ սխալ, կարեւոր կամ պակաս կարեւոր համարվելու հետ մեկտեղ՝ իր որոշակիությունն ունեցող մի ուրույն աշխարհայացք է եւ բարձր վարպետությամբ ստեղծված գեղարվեստական իրականություն: Տեսական հարցադրումները տարբեր եւ, ըստ էության, ճիշտ կողմնորոշումներ կարող են ուղենշել, բայց, ի վերջո, պետք է հաշվի առնել գեղարվեստական փաստը: Ստեղծագործական հարցերի արծարծման տեսակետից հիշարժան է նաեւ անտիպ թողած «Հաղարծին» ակնարկը: Ճանապարհորդություն դեպի Հաղարծին. հեղինակը, Անդրեյ Բիտովը եւ մի քննադատ ու արվեստի հարցերի քննարկում:

Անառարկելի է, որ ժամանակը նաեւ այլ խնդիրներ ունի եւ կարեւոր խնդիրներ, որոնց գեղարվեստական պատկերը ցանկալի կլիներ գտնել հեղինակի աշխարհում, բայց ցանկությունը մնում է ցանկություն, իսկ գրողը դրա փոխարեն ստեղծում է իր ուրույն ու անկրկնելի աշխարհը եւ դրանով հարստացնում գրականությունը:

Այդ ցանկության իրականացումներից մեկը «Տաշքենդ» (*«Անձրեւած ամպեր», ՍԳ, 1982, թիվ 5*) վիպակն է, ինչը նաեւ առիթ է մտաբերելու Ակսել Բակունցի «Կածանով» ակնարկը: Բակունցի հերոսները կածանով ո՞ւր են գնում: Գնում են Տաշքենդ, որ պիտի դառնար Մաթեւոսյանի հերոսի երազանքը: Բակունցի ակնարկն ինքը՝ Մաթեւոսյանն է հուշում՝ ամսագրային տարբերակը բնաբանելով՝ տարեց գյուղացուն դեպի Տաշքենդ տանող հատվածով:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Եղիշե Չարենցի «Ծիածան» բանաստեղծական շարքի տաղաչափական արվեստը

➥ *էջ 6*

Չարենցը հիմնականում գործածել է քառատող տունը եւ կատարել խաչաձեւ հանգավորում: Ժողովածուն սկսվում է հետեւյալ քառատողով.

Ես աստղային մի պոետ, Լաբիրինթոսում
քո Կապույտ,
Քո՛ւյր, անցնում եմ, որպես աստղ, հոգիս —
մեռած աստղի փայլ.
Այնքան տրտում է հոգիս, բայց միշտ
ժպտում է հոգուդ,
Որ երազը չդառնա Գողգոթայի ճանապարհ...

Այս քառատողը բաղկացած է 14-վանկանի տողերից, որոնք մեծ հատածով բաժանվում են երկու հավասար մասերի, իսկ դրանք էլ իրենց հերթին՝ 4+3 սկզբունքով: Բանաստեղծության տողերն ավարտվում են շեշտված հանգով, եւ, ինչպես նշում է Էդ. Ջրբաշյանը, այդպիսի հանգը կոչվում է արական (*տե՛ս Ջրբաշյան Էդ.., Գրականության ներածություն, Եր., 2011, էջ 268*): Հեղինակն ստեղծում է, այդպես կոչված, մոտավոր կամ անճիշտ հանգեր: 20-րդ դարի հայ պոեզիայում սկսվել էր մի միտում, որը պահանջում էր՝ ճշգրիտ հանգեր չլինեն, այլ՝ մոտավորապես նմանահնչյուն: Այդպիսի մոտավոր հանգերի մեջ նման հնչյունների կողքին լինում են նաեւ մեծ կամ փոքր չափով իրարից շեղվող կամ ակնհայտորեն տարբեր հնչյուններ: Ահա հենց այս մոտավոր կամ, այլ կերպ ասած, ասոնանսային հանգերն են տեղ գտել Չարենցի ստեղծագործության մեջ եւ գործածվել են նաեւ այս քառատողում: Այսպես, օրինակ, մոտավոր հանգ են կազմում «կապույտ» եւ «հոգուդ» բառերը, ինչպես նաեւ «փայլ»-ը եւ «ճանապարհ»-ը, որոնցում միայն ձայնավորն է հանգավորված:

Նույն՝ 14-վանկանի ոտանավորի չափով է գրված նաեւ «Ծիածան» բանաստեղծությունը, որտեղ նախորդ բանաստեղծության նման տողերը մեծ հատածով բաժանվում են երկու հավասար մասի՝ 7+7, իսկ դրանք էլ բաժանվում են 4+3 չափով: Ուշագրավ է այն հանգամանքը, որ բանաստեղծության առաջին եւ երրորդ տները, որոնք նույնն են, վերջին տողը կազմում են միայն 7-վանկանի չափով, որը փոքր հատածով բաժանվում է 4+3-ի.

Լուսամփոփի պես աղջիկ՝ աստվածամոր
աչքերով,
Թոքախտավոր, թափանցիկ, մարմինի պես
երազի.
Կապույտ աղջիկ, ակաթի ու կաթի պես
հոգեթով,
Լուսամփոփի պես աղջիկ...

Այս ոտանավորի բանաստեղծական տողի հանգն արական է, քանի որ շեշտվում է վերջին վանկը: Հեղինակը խաչաձեւ հանգավորում է օգտագործում՝ abab, սակայն, բացի ճշգրիտ հանգից, օգտագործում է նաեւ անճիշտ հանգը: Օրինակ՝ բանաստեղծության երկրորդ տնում նա գրում է.

Ես ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ, որ չմեռնի իմ հոգին,
Որ չմարի իմ հոգին քո ակաթե աչքերում.
Ես ի՞նչ անեմ, որ մնա ծիածանը երեքգույն,
Որ չցնդի, չմարի իմ հոգու հեռուն...

Այստեղ, օրինակ, «աչքերում» եւ «հեռուն» բառերը կազմում են մոտավոր հանգ: Կարեւոր է նաեւ այն հանգամանքը, որ ամեն տողի վերջում տրվում է մեծ դադար, որն ազդարարում է մյուս տողի սկիզբը: Ամբողջ բանաստեղծությունը բաղկացած է քառատող տներից, որոնք կոչվում են քատրե եւ հաճախադեպ են պոեզիայում: Հիմնականում հենց այս քառատող տներով են կառուցված նաեւ «Ծիածան» ժողովածուի մյուս բանաստեղծությունները:

Օրինակ՝ իրենից մի քառատող է ներկայացնում նաեւ շարքի մեկ այլ անվերնագիր բանաստեղծություն: Չարենցը գրում է.

Երեք ճաճանչ, երեք երանգ, երեք գույն,
Որ անցան
Քո՛ւյր, կապել են քո աչքերում, իմ հոգում
Ծիածան:

Այս քառատողն անհավասար տողերով բանաստեղծություն է, քանի որ առաջին եւ երրորդ տողերը 11-վանկանի են, իսկ երկրորդն ու չորրորդը՝ 3:11-վանկանի տողը, իր հերթին, բաժանվում է 4+4+3 սկզբունքով: Չնայած տողերի անհավասարությանը՝ բանաստեղծության ռիթմականությունը պահպանվում է, քանի որ կարճ տողը կրկնում է իրեն նախորդող 11-վանկանի տողի 3-վանկանի ոտքը, ինչը ռիթմական շեղում չի առաջացնում: Հեղինակը կատարել է խաչաձեւ հանգավորում, ինչն ամենից շատն է բնորոշ քառատող տներին, եւ հանգավորման մեջ օգտագործել է նաեւ մոտավոր հանգ, օրինակ՝ «գույն» եւ «հոգում» բառերի դեպքում:

Ինչպես նշվեց, շարքի բանաստեղծություններից շատերը բաղկացած են 10-վանկանի տողերից, եւ այդպիսին է նաեւ «Կապույտը» բանաստեղծությունը.

Կապույտը հոգու աղոթանքն է, քո՛ւյր,
Կապույտը – թախիծ.
Կապույտը – կարոտ թափանցիկ, մաքուր,
Ու հստակ, ու ջինջ:

Քառատող տներով բանաստեղծության տողերը բաժանվում են իրար հավասար մասերի՝ 5+5՝ բացառությամբ յուրաքանչյուր տան երկրորդ եւ չորրորդ տողերի, որոնք հենց իրենք իրենցով 5-վանկանի տողեր են: Բանաստեղծը կատարել է խաչաձեւ հանգավորում՝ abab:



Բանաստեղծության հանգավորումը հիմնականում արված է ճշգրիտ հանգերի միջոցով, օրինակ՝

Կապույտը քրոջ աչքերի անհուն
Առավոտն է թաց:
Կապույտում հոգիս մի հին իրիկուն
Անզոր հեծկլտաց:

Այս քառատողում «անհուն» եւ «իրիկուն», ինչպես նաեւ «թաց» ու «հեծկլտաց» բառերը կազմում են ճշգրիտ հանգեր: Սրան հակառակ՝ բանաստեղծության մեջ տեղ են գտել նաեւ մոտավոր հանգեր. օրինակ՝ Չարենցը գրում է.

Կապույտում անսուտ խոսքեր են հոսում
Երկնքից – երկինք:
Հոգիս – Կապույտի լաբիրինթոսում
Սրբացած կնիք:

Այս տողերում, եթե «հոսում» եւ «լաբիրինթոսում» բառերը կազմում են ճշգրիտ հանգ, ապա «երկինք» եւ «կնիք» բառերը կազմում են մոտավոր հանգ: ➥ *էջ 8*

Կորոնավիրուս

➥ էջ 5

Արդյոք չարիքը կվերանա՞ աշխարհից, արդյոք կսովորե՞նք իրար օգնել, հասկանալ, սիրել, բարությամբ հաղորդակցվել:

Արդյոք կսովորե՞նք հարգել բնության օրենքները, կձգտե՞նք չխախտել տիեզերքի ներդաշնակությունը, երկյուղածությամբ ու սիրով կվերաբերվե՞նք բնությանը, այն ամենին, ինչը շրջապատում է մեզ: Ցանկացած միջամտություն բնությանը պետք է լինի բնության օրենքները հարգելով:

Երջանկությունն է կյանքի ցուցանիշը. մարդուն ոչինչ ավելին անհրաժեշտ չէ: Նա երջանիկ կլինի, եթե իրեն, իր շրջապատը հոգեպես բարեփոխի, եթե դիմացինին վերաբերվի այնպես, ինչպես կուզենար իրեն վերաբերվեին:

Այդ իսկ պատճառով պետք է վերաբերվենք միմյանց այնպես, ինչպես մայրն է վերաբերվում իր երեխային՝ առանց եսասիրության եւ անշահախնդիր սիրով: Նման մթնոլորտում մարդիկ իրենց լավ կզգան:

Կորոնավիրուսը եւ հեռավար կրթությունը

Հեռավար ուսուցման եւ դրանից բխող խնդիրներն առաջնային քննարկման առարկա են դարձել ոչ միայն Հայաստանում, այլեւ COVID-19-ից տուժած բոլոր երկրներում:

Տատյանա Չերնիգովսկայան անդրադարձել է նաեւ այս խնդրին. «COVID-19-ով պայմանավորված հեռավար կրթությունը ոչ թե ժամանակավոր է, այլ մեծ մի մինուս, քանի որ հաճախ «ադամանդագործ» մարդիկ, հսկայական գործնական եւ գիտական փորձ ունեցող մասնագետները հեռանում են աշխատանքից եւ մասնագիտությունից՝ թվային իրականության մեջ ըստ պատշաճին տեղավորվելու անկարողության պատճառով: Այսինքն՝ նշածողն



իջեցվում է: Սակայն կան բացառություններ, երբ մարդիկ, անկախ տարիքից եւ մասնագիտությունից, կարողանում են յուրացնել այդ ոլորտների գիտելիքները: Անհրաժեշտ է պահպանել նման մարդկանց, այլապես կբախվենք մի իրավիճակի, երբ, օրինակ, մարդիկ, որոնք կարողանում էին կարդալ եգիպտական պապիրուսները, այլեւս չկան, որ կարդան: Եվ եթե մենք չենք կարողանում պահել այդ մասնագետներին այն պատճառով, որ նրանք չեն կարողանում ճիշտ լրացնել էլեկտրոնային աղուսյակները, ապա մենք հիմարներ ենք: Դարվինի հոտ է գալիս. ասես բնական ընտրություն է տեղի ունենում՝ սոցիալական եւ գաղափարական»:

Վերջինս նշում է նաեւ, որ հեռավար կրթության եւ դրա հետեւանքների վերաբերյալ դեռեւս չկան իրականացված հետազոտություններ, որոնք հնարավորություն կտային գնահատելու իրավիճակը:

Այս առիթով հարկ է նշել, որ Հայաստանում արդեն իսկ առկա է հեռավար կրթության վերաբերյալ տեղական (գյուղական համայնքների դպրոցներում) մշտադիտարկման արդյունքների վերլուծություն (*տես Հեռավար ուսուցման խնդիրները Շիրակի մարզի գյուղական համայնքների դպրոցներում. վերլուծություն 2020. «Ինթրա» հոգեբանական ակումբ ՀԿ*): https://www.fontanka.ru/2020/08/30/69448318/

2020-ի մարտի 16-ին ՀՀ կառավարության 298 որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում հայտարարվեց արտակարգ դրություն՝ կապված ՀՀ-ում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման հետ, եւ ուսումնական հաստատություններում կրթության կազմակերպումը դարձավ հեռավար: Չնայած դպրոցական հաստատություններում անցումը հեռավար կրթությանն անսպասելի էր եւ իր բնույթով նորարար, այնուամենայնիվ արտակարգ դրության ժամանակահատվածում հրապարակվեցին դրա վերաբերյալ տեղեկատվական նյութեր, եւ օրենսդրության մեջ կատարվեցին անհրաժեշտ փոփոխություններ ու լրացումներ: Հեռավար կրթության վերաբերյալ օրենսդրությունն ամրագրում է որոշակի կարգավորումներ:

Այսպես՝ Կրթության մասին ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է կրթության ձեւերը. սովորողների կարողություններին եւ պահանջներին համապատասխան՝ կրթական ծրագրերն իրականացվում են առկա (ստացիոնար), հեռակա, հեռավար (դիստանցիոն) եւ դրսեկության (ընտանեկան եւ ինքնակրթության) ձեւերով: Կրթության բոլոր ձեւերի համար նույն կրթական ծրագրերի շրջանակներում գործում է միասնական պետական կրթական չափորոշիչը:

Հանրակրթության մասին ՀՀ օրենքում տրվում է հեռավար կրթության հասկացությունը. կրթական ծրագրի իրականացման ձեւ, որի շրջանակներում անմիջական եւ ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի եւ ուսուցչի միջեւ իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների եւ հեռահաղորդակցության միջոցներով, սակայն հիմնական հանրակրթական ծրագրերի կազմակերպման ընթացքում կարող է կիրառվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով՝ բացառիկ դեպքերում եւ որոշակի ժամկետով:

Հեռավար ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ, որոնք հեռավար դասընթացների նախագծման եւ իրագործման հիմքն են: Հեռավար ուսուցումը դիտվում է որպես ուսուցման ինքնուրույն ձեւ. այն չի կարող իրականացվել ուսուցման ավանդական ձեւերով: Հեռավար ուսուցման եւ առկա ու հեռակա ուսուցման ձեւերի համեմատությունը ցույց է տալիս, որ հեռավար ուսուցումը կարելի է դիտել որպես առկա ու հեռակա ուսուցման զարգացման նոր աստիճան, որը հնարավորություն է ընձեռում կիրառելու տեղեկատվական նոր տեխնոլոգիաներ՝ հիմնված անձնական համակարգիչների, վիդեո եւ աուդիոսարքավորումների կամ այլ տեխնիկայի օգտագործման վրա: Հեռավար ուսուցման տարբերությունն առկա ուսուցումից այն է, որ նյութի էական մասը յուրացվում է ոչ թե լսարանում, այլ համացանցային տեխնոլոգիաների միջոցով, այսինքն՝ հեռավար ուսուցմամբ սովորողների աշխատանքը կազմակերպվում է հիմնականում ինքնուրույն:

Արդյունավետ կլինի նաեւ նմանատիպ հետազոտություն անցկացնել միջին մասնագիտական եւ բարձրագույն կրթություն ստացող ուսանողների շրջանում: Ամբողջական պատկեր ստանալուց հետո նոր միայն կարելի է խոսել հեռավար կրթության թերությունների ու առավելությունների մասին:

Սուսաննա ԴԱՎԹՅԱՆ
Փիլիսոփայական գիտ. դոկտոր

Եղիշե Չարենցի «Ծիածան» բանաստեղծական շարքի տաղաչափական արվեստը

➥ էջ 6–7

Շարքի հաջորդ ենթավերնագիրը ներկայացնող «Ոսկին» բանաստեղծությունը տարբերվում է շարքի հիմնական մասը կազմող քառատող տներով բանաստեղծություններից եւ կազմված է երկտող տներից: Էդ. Ջրբաշյանն իր «Գրականության ներածություն» գրքում նշում է. «Տան ամենապարզ ձեւը երկտող տունն է՝ դիստիքոսը, որի երկու տողերն իրար հետ հանգ են կազմում» (*տես Ջրբաշյան Էդ.., Գրականության ներածություն, Եր., 2011, էջ 271*): «Ոսկին» բանաստեղծությունը կազմված է հենց այդպիսի երկտող տներից.

Կապույտի մեջ, կապույտի մեջ – արեւի ոսկին:
– Քնի՛ր, քնի՛ր, կապու՛յտ աղջիկ, չզարթնես ծեգին:
Կարապները լճերի մեջ, ջրերի վրա
Դեռ քնել են, դեռ նիրհում են. կարթնանան հիմա:

Բանաստեղծական տողը 13-վանկանի է, որն էլ իր հերթին բաժանվում է 4+4+5 սկզբունքով: Բանաստեղծական հանգերում տեղ են գտել նաեւ մոտավոր հանգեր, օրինակ՝

Ու արեւի թեւը ահա, լճերի նիրհում
Հրդեհում է աստղանկար տրտմության հեռուն…
Ու մարում են, ու մեռնում են այն աստղերը, տես:
Արթնացել են կարապները ու կանչում են մեզ:

Վերոնշյալ երկտողերում «նիրհում» եւ «հեռուն», ինչպես նաեւ «տես» ու «մեզ» բառերը միասին կազմում են մոտավոր հանգեր:

Հաջորդ բանաստեղծությունը, որը բացում է մյուս ենթաշարքը եւ ներկայացնում է ծիածանի մեկ այլ գույն, վերնագրված է «Մանուշակագույն».

Կապույտից հետո եւ ոսկուց հետո,
Քո՛ւյր, փռվեց ահա իմ տրտմած հոգում,
Որպես երազում ապրած երեկո
Մի խամրած մշուշ մանուշակագույն…

Բանաստեղծական տողը 10-վանկանի է, որը բաժանվում է 5+5 չափով: Բանաստեղծը կատարել է խաչաձեւ հանգավորում՝ օգտագործելով մոտավոր հանգ՝ «հոգում» եւ «մանուշակագույն» բառերի դեպքում: Բանաստեղծությունը բաղկացած է երկու տնից, սակայն եթե առաջին տունը քառատող է, ապա երկրորդ տունը հնգատող է.

Հիշում եմ հիմա, որ մի իրիկուն,
Ժպտալուց հետո, երբ ոսկի շղթան
Ընկավ ամոթխած գիրկը լռության –
Փռվեց քո դեմքին, իմ տրտմած հոգում
Մի խամրած մշուշ մանուշակագույն:

Այս տան տողերը եւս 10-վանկանի են եւ հատածով բաժանված են 5+5-ի: Այս տան մեջ արդեն հեղինակը կատարել է օղակաձեւ հանգավորում, եւ հանգ են կազմում առաջին տողի «իրիկուն», չորրորդ տողի «հոգում» եւ հինգերորդ տողի «մանուշակագույն», ինչպես նաեւ երկրորդ տողի «շղթան» եւ «լռության» բառերը: Ընդ որում՝ «իրիկուն», «հոգում» եւ «մանուշակագույն» բառերը կազմում են մոտավոր հանգեր:

10-վանկանի տողերից է բաղկացած նաեւ շարքի հաջորդ բանաստեղծությունը, որը հեղինակն անվերնագիր է թողել: Այն իրենից ներկայացնում է 8-տողանի երկու տուն.

Աչքերիդ վճիտ ու թաց կապույտում
Ժպիտը ոսկի.
Մայրամուտային մշուշը տրտում՝
Այտերիդ վրա.
Եվ, որպես շշուկ չքաղված հասկի,
Մեր հոգնած սրտում
Սպասումը, որ ցրտաբեր քամին
Հիմա կսուրա…
Ստվերներն իջնում ու փարվում էին
Դեմքիդ, իմ հոգուն.
Մթնում էր հեռուն խանձված հոգու,
Որպես իրիկուն.
Երազները, քո՛ւյր, երանգներ էին,
Խամրեցին միգում,
Խամրեցին, հանգան մայրամուտային
Իրիկնաժամում մանուշակագույն…

Բանաստեղծությունը, ինչպես երեւում է, կազմված է անհավասար տողերից, քանի որ առաջին, երրորդ, հինգերորդ եւ յոթերորդ տողերը 10-վանկանի են, իսկ երկրորդ, չորրորդ,

վեցերորդ եւ ութերորդ տողերը՝ 5-վանկանի: Սակայն բանաստեղծության ռիթմը պահպանվում է, քանի որ այդ 5-վանկանի տողերը կրկնում են իրեն նախորդող տողի վերջին 5-վանկանի ոտքը:

Ուշարժան է նաեւ շարքի մեկ այլ բանաստեղծություն, որը վերնագրված է «Հրաժեշտի երեկոն» եւ ասես ամփոփում է շարքի բանաստեղծություններում առկա տրամադրությունները.

Ջինջ ճախրում են ղողանջները հորիզոնից հորիզոն,
– Ի՞նչ տրտում է, կապո՛ւյտ աղջիկ, հրաժեշտի երեկոն…

Բանաստեղծությունը բաղկացած է երկտող տներից, որոնց երկու տողերն իրար հետ հանգ են կազմում: Սակայն հանգավորելիս հեղինակը գործածել է ոչ միայն ճշգրիտ, այլեւ մոտավոր հանգեր.

Տրտմություն ու լույս է իջել քո աչքերում, իմ հոգում.
Օրհնե՛նք, օրհնե՛նք այս երկրային հրաժեշտի երեկոն…

Այս տողերում «հոգում» եւ «երեկոն» բառերը կազմում են մոտավոր հանգ: Բանաստեղծության տողերը 15-վանկանի են, որոնք իրենց հերթին բաժանվում են 4+4+4+3 ձեւով:

Այսպիսով՝ կարող ենք նշել, որ «Ծիածան» շարքի բանաստեղծությունները գրված են վանկական տաղաչափական համակարգով, որն ամենից շատ է հանդիպում մեր պոեզիայում: Հեղինակը հիմնականում կատարել է խաչաձեւ հանգավորում, բայց առկա են նաեւ օղակաձեւ հանգավորման օրինակներ: Հանգավորման մեջ Չարենցն օգտագործել է ինչպես ճշգրիտ, այնպես էլ մոտավոր հանգեր: Բանաստեղծություններից շատերը քառատող տներով են կառուցված, սակայն հանդիպում են նաեւ երկտող տներով բանաստեղծություններ եւ այլն: Այնուամենայնիվ, ինչ չափի տող էլ որ գործածած լինի հեղինակը, եւ ինչ տեսակ հանգավորում էլ, որ նա օգտագործի, բառերը ծառայում են բանաստեղծի հոգու ու ապրումների արտահայտմանը:

Սամվել ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 30.09.2021 թ.
Տպաքանակը՝ 1225